Երեխաների համար առանցքային հանձնառություններ մարդասիրական գործողություններում

20 YEAR CONVENTION ON THE RIGHTS OF THE CHILD

unicef

Կազմի դիմերսի լուսանկարները՝

© UNICEF/NYHQ2007-1907/Noorani

© UNICEF/NYHQ2006-2237/Pirozzi

Կազմի դարձերեսի լուսանկարները՝

© UNICEF/NYHQ2008-0724/Pirozzi

© UNICEF/NYHQ2009-0565/Pirozzi

Լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք դիմել՝

Մարդասիրական քաղաքականության բաժին,

Արտակարգ իրավիճակների ծրագրերի գրասենյակ, ՅՈՒՆԻՍԵՖ

Հրատարակված է ՅՈՒՆԻՍԵՖ-ի

Հաղորդակցության բաժնի կողմից

Միավորված ազգերի կազմակերպության հրապարակ, 3 [United Nations Plaza]

Նյու Յորք, NY 10017, ԱՄՆ

Էլ-փոստ՝ pubdoc@unicef.org

Վեբկայք՝ www.unicef.org

ISBN: 978-92-806-4512-5

© Միավորված ազգերի կազմակերպության Մանկական հիմնադրամ (ՅՈՒՆԻՍԵՖ)

Մայիս, 2010 թվական

Երեխաների համար առանցքային հանձնառություններ մարդասիրական գործողություններում

20 YEAR CONVENTION ON THE RIGHTS OF THE CHILD

unicef

Հապավումներ

ՀՌԲ	հակառետրովիրուսային բուժում
ՀՌՎ	հակառետրովիրուսային
ԴԿԳ	Դիմումների կենտրոնացված գործընթաց
ԵԱՀ	Երեխաների համար առանցքային հանձնառություններ
ԱԻԱԿՀ	Արտակարգ իրավիճակներին արձագանքման կենտրոնական հիմնադրամ
ԵԳ	(Տվյալ) Երկրի գրասենյակ
ՊԸԾ	Պատվաստման ընդլայնված ծրագիր
ՎԶ/ՎԳ	վաղ ահազանգում/վաղ գործողություն
ԳՀԲ	գենդերահեն բռնություն
ՄԳԶ	*Մարդասիրական գործողությունների վերաբերյալ զեկույց*
ԵՄԹ	Երկրի մարդասիրական թիմ
ՄԻԱՎ և ՁԻԱՀ	մարդու իմունային անբավարարության վիրուս/ ձեռքբերովի իմունային անբավարարության համախտանիշ
ԾՄԻՀՄ	ծրագրերի մշակման՝ մարդու իրավունքների վրա հիմնված մոտեցում
ՄԳՄՀ	Միջգործակալական մշտական հանձնաժողով
ՏՀՏ	տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ
ԱԻԿՄՑ	Արտակարգ իրավիճակներում կրթության միջգործակալական ցանց
ՄՎՏԵՍ	մանուկների և վաղ տարիքի երեխաների սնուցում
ՀԱՀՍԱ	հոգեկան առողջություն և հոգեբանական-սոցիալական աջակցություն
ԱՆԿՍ	Անվտանգության նվազագույն կիրառելի ստանդարտներ
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀԴՌՀԳ	Հանրային հատվածի դաշինքների և ռեսուրսների հավաքագրման գրասենյակ
ՄՄՓԿ	մորից մանկան փոխանցման կանխարգելում
ՏԳ	Տարածաշրջանային գրասենյակ.
ԽՍԹ	խիստ սուր թերսնուցում
VISION	Տեղեկատվության վիրտուալ ինտեգրացված համակարգ
ՋՍՀ	ջուր, սանիտացիա և հիգիենա

Բովանդակություն

Հապավումներ **2**

Բովանդակություն **3**

I. Շրջանակը, սկզբունքները և հաշվետվականությունը **5**

1.1 Նպատակը 5

1.2 Գործընկերություններ 6

1.3 Ընդգրկումը 7

1.4 ՅՈՒՆԻՍԵՖ-ի ծրագրային շրջանակի ամրապնդում 9

1.5 Համատեքստի վերլուծություն 9

1.6 Մարդասիրական սկզբունքներ 10

1.7 Մարդու իրավունքներ վրա հիմնված մոտեցում ծրագրերի մշակմանը 11

1.8 Գենդերային հավասարությունը մարդասիրական գործողություններում 12

1.9 «Մի վնասիր» սկզբունքը 13

1.10 Համաշխարհային նորմեր և ստանդարտներ 14

1.11 Մոնիտորինգ, վերլուծություն և գնահատում 15

1.12 Միջգործակալական մարդասիրական բարեփոխում 16

1.13 Միասնական (ինտեգրված) ծրագրային մոտեցում 16

1.14 Շահերի պաշտպանություն և քարոզչություն 17

1.15 Հաղորդակցություն հանուն զարգացման 18

1.16 Ռիսկի կառավարում և գնահատում 19

II. Ծրագրային հանձնառություններ **21**

2.1 Կատարողականի մոնիտորինգ 22

2.2 Իրավիճակի արագ գնահատում, մոնիտորինգ և գնահատում 25

2.3 Սնուցում 28

2.4 Առողջապահություն 34

2.5 Ջուր, սանիտացիա և հիգիենա (ՋՍՀ/WASH) 39
2.6 Երեխաների պաշտպանություն 44
2.7 Կրթություն 50
2.8 ՄԻԱՎ և ՁԻԱՀ 55
2.9 Մատակարարում և կազմակերպչական աջակցություն 58
III: Գործառնական հանձնառություններ 61
3.1 Մեդիա և հաղորդակցություն 61
3.2 Անվտանգություն 63
3.3 Մարդկային ռեսուրսներ 65
3.4 Ռեսուրսների հավաքագրում 67
3.5 Ֆինանսներ և ադմինիստրացիա 70
3.6 Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ 71

I. Շրջանակը, սկզբունքները և հաշվետվականությունը

1.1 Նպատակը

Մարդասիրական գործողություններում Երեխաների համար առանցքային հանձնառությունները (ԵԱՀ-ներ) մարդասիրական գործողությունների իրականացման համաշխարհային շրջանակ է, որը նախաձեռնել են ՅՈՒՆԻՍԵՖ-ը և կազմակերպության գործընկերները: Այս շրջանակը հիմնված է մարդու իրավունքների պաշտպանության միջազգային իրավունքի վրա, մասնավորապես՝ Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի[1] և, բարդ արտակարգ իրավիճակների դեպքում, միջազգային մարդասիրական իրավունքի վրա: Կիրարկման մակարդակում, ԵԱՀ-ները հիմնված են համաշխարհային ստանդարտների և մարդասիրական գործողությունների նորմերի վրա (տե՛ս *Բաժին 1.1*):

ԵԱՀ-ները խթանում են կանխատեսելի, արդյունավետ և ժամանակին ձեռնարկված մարդասիրական գործողություններ: Դրանք կենսագործվում են կառավարությունների, մարդասիրական կազմակերպությունների (ներառյալ ՅՈՒՆԻՍԵՖ-ը) և այլոց միջև գործընկերության, ինչպես նաև թե՛ տեղական, թե՛ միջազգային ռեսուրսների հավաքագրման միջոցով:

ԵԱՀ-ների դրդապատճառը մարդասիրական ճգնաժամի հետևանքով տուժող երեխաների իրավունքների իրացման կարիքն է, և հետևաբար՝ դրանք վերաբերելի են բոլոր երկրներին: ԵԱՀ-ները կիրառելի են ինչպես հանկարծակի ծագած սուր կարիքների, այնպես էլ տևական մարդասիրական ճգնաժամերի դեպքում:

ՅՈՒՆԻՍԵՖ-ն աշխատում է գործընկերների հետ՝ հետամուտ լինելու մի սկզբունքային մոտեցման, և ձգտում է ԵԱՀ-ների շուրջ ձևավորել դաշինք գործընկերների հետ: Կազմակերպությունն իր նպաստն է բերում ԵԱՀ-ների իրագործմանը՝ ռեսուրսների հավաքագրման, գործընկերներին ուղղակի օժանդակության և շահերի պաշտպանության միջոցով: ԵԱՀ-ների

[1] Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա, հոդված 45. «Սույն կոնվենցիայի իրականացման արդյունավետությանը նպաստելու և նրա ընդգրկած բնագավառներում միջազգային համագործակցությունը խրախուսելու նպատակով. ա) Միավորված ազգերի կազմակերպության մասնագիտացված հիմնարկները, Մանկական հիմնադրամը և Միավորված ազգերի կազմակերպության այլ մարմիններ իրավունք ունեն ներկայացված լինել սույն կոնվենցիայի այն դրույթների իրականացման վերաբերյալ հարցերի քննարկման ժամանակ, որոնք մտնում են նրանց լիազորությունների ոլորտի մեջ»:

իրագործումը. այսուհանդերձ, կախված է բազմաթիվ գործոններից, այդ թվում՝ այլ գործընկերների ներդրումներից և միջոցների առկայությունից:

ԵԱՀ-ների համատեքստում կոնկրետ ոլորտի վերաբերող ծրագրային հանձնառությունները մաս են կազմում կոլեկտիվ ծրագրային արձագանքի, որն ուղղվում է մարդասիրական ճգնաժամի ազդեցությունը կրող երեխաներին. դրանք մշակված են՝ աջակցելու ավելի ընդարձակ միջգերատեսչական կլաստերային (ճյուղային) համակարգմանը:

1.2 Գործընկերություններ

ԵԱՀ-ներն իրագործվում են գործընկերների, ընդունող կառավարությունների, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, հասարակական կազմակերպությունների (ՀԿ-ներ) (թե՛ տեղական, թե՛ միջազգային), ՄԱԿ-ի գործակալությունների և դոնորների միջև սերտ համագործակցության միջոցով: Սա համահունչ է մարդասիրական միջգործակալական բարեփոխումների, ներառյալ՝ Գործընկերության սկզբունքների ներքո ՅՈՒՆԻՍԵՖ-ի ստանձնած հանձնառություններին:

Գծապատկեր 1. ԵԱՀ արդյունավետ արձագանքման հայեցակարգային շրջանակ



Աղբյուրը. Ադապտացված է Պատրաստվածության և արտակարգ իրավիճակներում գործողությունների պլանավորման ՄԳՄՀ աշխատանքային խմբից

1.3 Ընդգրկումը

Մարդասիրական իրավիճակը սահմանվում է որպես ցանկացած հանգամանք, որի դեպքում մարդասիրական միջամտության կարիքներն այնքան զանգվածային և համալիր են, որ պահանջում են զգալի արտաքին օժանդակություն և ռեսուրսներ, և որի դեպքում անհրաժեշտ է բազմաճյուղային արձագանք, որին կմասնակցի միջազգային մարդասիրական կազմակերպությունների մի լայն շրջանակ:[2] Այդպիսի իրավիճակների թվում կարող են լինել փոքրամասշտաբ արտակարգ իրավիճակները. սուղ ռեսուրսներ ունեցող երկրներում շեմը կլինի ավելի ցածր, քան մեծ կարողություններ ունեցող երկրներում:

Արտակարգ իրավիճակը մի իրավիճակ է, որը վտանգում է մեծաքանակ բնակչության կյանքը և բարեկեցությունը և պահանջում է արտակարգ գործողություններ՝ ապահովելու այդ մարդկանց գոյատևումը, խնամքը և պաշտպանությունը:[3]

ԵԱՀ-ները.

- *Կազմում են մի համաշխարհային շրջանակ*, որը գործընկերների հետ համագործակցությամբ մշակվել է ՅՈՒՆԻՍԵՖ-ի կողմից՝ պաշտպանելու մարդասիրական ճգնաժամերի ազդեցությունը կրող երեխաների իրավունքները:
- *Կիրառելի են մարդասիրական ճգնաժամերի ազդեցությունը կրող բոլոր երեխաների դեպքում*, անկախ տնտեսական և սոցիալական զարգացման վիճակից, որում նրանք հայտնվել են, և անկախ ՅՈՒՆԻՍԵՖ-ի ռեսուրսների առկայությունից:
- *Վերաբերում են ծրագրային և գործառնական հանձնառությունների և ընդգրկում են ծրագրային միջամտություններ*՝ ուղղված սնուցմանը, առողջության պահպանմանը, ջրի և սանիտարական պայմանների ապահովմանը, ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի դեմ պայքարին, կրթությանը և երեխաների պաշտպանությանը:

---

2 Միջգործակալական մշտական հանձնաժողով, «Ուղեցույց մարդասիրական արձագանքման ամրապնդման նպատակով կլաստերային մոտեցման օգտագործման վերաբերյալ» [‘Guidance Note on Using the Cluster Approach to Strengthen Humanitarian Response’], ՄԳՄՀ/IASC, Ժնև, նոյեմբերի 24, 2006 թ.:

3 Միավորված ազգերի կազմակերպության Մանկական հիմնադրամ, «Ծրագրային քաղաքականությունների և ընթացակարգերի ձեռնարկ. Ծրագրերի իրականացման գործառնություններ» [“Programme Policy and Procedure Manual: Programme Operations”], ՅՈՒՆԻՍԵՖ, Նյու Յորք, հունվարի 22, 2009 թ:

- *Արտացոլում է գործողություններ*, որոնք ձեռնարկվում են պատրաստվածության և արձագանքման փուլերի ողջ ընթացքում, ներառյալ՝ վաղ վերականգնմանն ուղղված գործողությունները, հատուկ շեշտադրելով արդյունքները և հենանիշները (տե՛ս Գծապատկեր 1): ԵԱՀ-ները ներառում են ՅՈՒՆԻՍԵՖ-ի և կազմակերպության միջգործակալական գործընկերների պարտավորությունները, ինչպես նաև իշխանությունների հետ համակարգումը: Դրանք արտահայտում են հստակ նվիրվածություն մարդասիրական գործողություններում կարողությունների զարգացմանը:
- *Հիմնված են մարդու իրավունքների և մարդասիրական սկզբունքների վրա*, և հանդիսանում են ՅՈՒՆԻՍԵՖ-ի մարդասիրական գործունեության անկյունաքարը:
- *Գործարկվում են մեծ թվով երեխաների ու կանանց հարաբերական իրավիճակի և բարեկեցության կտրուկ վատթարացման հետևանքով*, որն անհրաժեշտ է դարձնում արտակարգ գործողությունների ձեռնարկումը:
- *Ներառում են հստակ ռազմավարություններ*՝ նվազեցնելու աղետների ռիսկը և մարդասիրական գործողությունների իրականացման բոլոր փուլերում, ներառյալ՝ պատրաստվածության փուլում, զարգացնելու տեղական կարողությունները: Արձագանքման ընթացքում գործողությունների ճիշտ ժամանակին ձեռնարկումը և դրանց արդյունավետությունը առաջնահերթություններ են, որպեսզի հնարավոր լինի կենսագործել ԵԱՀ-ներում ուրվագծված հանձնառությունները:
- *Սևեռվում են մարդասիրական արձագանքման*՝ վճռական նշանակություն ունեցող առաջին ութ շաբաթվա ընթացքում գործողությունների շուրջ, և ուղղորդում է գործողություններն ութ շաբաթից անդին՝ հասնելու սահմանված հենանիշներին:
- *Ներառում են ինչպես ծրագրային, այնպես էլ գործառնական հանձնառություններ*, որոնք համապատասխանում են արդյունքահեն ճյուղային ծրագրերին և գործառնական ոլորտներին, որոնք արդյունավետ արձագանքման տեսակետից համարվում են անհրաժեշտ:
- *Քաղաքականության մշակման առումով ՅՈՒՆԻՍԵՖ-ին ստրամադրում են ներքին ուղղորդում*՝ այն գիտակցությամբ, որ գործընկերությունների և համագործակցության ամրապնդումը կազմակերպության մարդասիրական գործողությունների հաջողության համար ունեն առանցքային նշանակություն:

Գործընկերությունների համատեքստում և կախված հասանելիության աստիճանից, անվտանգությունից և ֆինանսավորման առկայությունից՝ ՅՈՒՆԻՍԵՖ-ը, գործընկերների հետ միասին, հանձն է առնում ապահովել

ծառայությունների մատուցումը: ՅՈՒՆԻՍԵՖ-ի և գործընկերների դերը կփոփոխվի՝ ըստ տեղական պայմանների և համապատասխան կարողությունների:

Գծապատկեր 2. Ժամանակացույց հանկարծահաս արտակարգ իրավիճակների դեպքում

Արձագանքման ժամանակացույցը սահմանում է հանկարծահաս արտակարգ իրավիճակների դեպքում ժամկետները.

• **Առաջին 72 ժամն** ընդգրկում է գործողություններ, որոնք անհրաժեշտ են ղեկավարման և իրականացման գործընթացների համար:

• **Առաջին 8 շաբաթն** ընդգրկում է գործողություններ, որոնք վերաբերում են կենսական արձագանքմանը և վաղ վերականգնմանը:

• ԵԱՀ-ներում **վաղ վերականգնման գործունեությունը** գործողություններ և մոտեցումներ են, որոնք պետք է կիրառվեն անհապաղ և զուգահեռ՝ անմիջապես իրագործվող արձագանքման.

1.4 ՅՈՒՆԻՍԵՖ-ի ծրագրային շրջանակի ամրապնդում

ԵԱՀ-ները ՅՈՒՆԻՍԵՖ-ի կողմից երկրում իրականացվող ծրագրերի անբաժանելի մասն են, քանի որ դրանք.

- Ճանաչում են մարդասիրական գործողությունների և զարգացման միջև կապը և հստակորեն կարևորում են աղետների ռիսկի նվազեցումը:
- Ընդգծում են արագ արձագանքման համար պատրաստվածության էական նշանակությունը:
- Հարթակ են հանդիսանում վաղ վերականգնման համար:
- Ստեղծում են գնահատման և ուսումնառության շրջանակ:

1.5 Համատեքստի վերլուծություն

ԵԱՀ-ների կիրառման համար տեղեկատվական հիմք է ծառայում համատեքստի վերլուծությունը, որը ներառում է հետևյալը.

- Քաղաքական և անվտանգությանն առնչվող զարգացումների ազդեցությունը աղջիկների, ,տղաների, կանանց և տղամարդկանց վրա, և դրանց հետևանքները ՅՈՒՆԻՍԵՖ-ի և գործընկերների ձեռնարկած գործողությունների և արձագանքման վրա, ներառյալ մարդասիրական ծառայությունների հասանելիությունը և շահերի պաշտպանությունը:

- Մարդասիրական կազմակերպությունների և շահագրգիռ այլ կողմերի ընթացիկ աշխատանքների, ինչպես նաև ՄԱԿ-ի առաքելությունների ռազմավարության և գործառնությունների վերանայում տեղակայման վայրերում:
- Երեխաների նկատմամբ բոլոր լուրջ խախտումների վերաբերյալ (ներառյալ երեխաների զինվորագրման, դպրոցների կամ հիվանդանոցների վրա հարձակումների, երեխաների և կանանց նկատմամբ սեռական բռնությունների մասին Անվտանգության խորհրդի բանաձևերում [տես, համապատասխանաբար, թիվ 1882, թիվ 1820 և թիվ 1888 ԱԽԲ-եր] ամրագրված խախտումները) ըստ սեռի և տարիքի տարբերակված տվյալների վերլուծություն և դրանց հետևանքները ՅՈՒՆԻՍԵՖ-ի կողմից հաշվետվությունների ներկայացման և արձագանքման տեսակետից:
- Կոնկրետ ծրագրային ոլորտների վրա մարդասիրական ճգնաժամի ներգործության գնահատումը՝ արձագանքման առաջնահերթությունների որոշման և համակարգման նպատակով:
- Ծրագրային ոլորտների սահմաններում աղջիկների, տղաների, կանանց և տղամարդկանց վերականգնմանն աջակցելու հնարավորությունների հատկորոշումը:

1.6 Մարդասիրական սկզբունքներ

ՅՈՒՆԻՍԵՖ-ը հավատարիմ է մարդասիրական սկզբունքների կիրառմանը կազմակերպության մարդասիրական գործողություններում: Այդ սկզբունքների թվում են.

- *Մարդասիրություն*. այն սկզբունքի պաշտպանում, որ ցանկացած տարիքի աղջիկները, տղաները, կանայք և տղամարդիկ պետք է բոլոր հանգամանքներում արժանանան մարդկային վերաբերմունքի՝ փրկելով նրանց կյանքը և ազատելով տառապանքից՝ միևնույն ժամանակ ապահովելով հարգանքն անհատի նկատմամբ:
- *Անկողմնակալություն*. ապահովելը, որ հավասար հիմունքներով և խտրականության որևէ տեսակից զերծ ձևով օժանդակություն տրամադրվի բոլոր այն անձանց, ովքեր տառապում են՝ միայն նրանց կարիքների և իրավունքների հիման վրա:
- *Չեզոքություն*. ստանձնած պարտավորություն՝ թշնամական իրադրություններում ոչ մեկի կողմը չանցնել և զերծ մնալ քաղաքական, ռասայական, կրոնական կամ գաղափարախոսական բնույթի վիճաբանություններում ներգրավվելուց:

Մարդասիրական սկզբունքները առաջ են մղվում իրազեկության ընդլայնման, փոխվստահության ձևավորման և մարդասիրական ճգնաժամային իրավիճակներում երեխաների իրավունքների համար քարոզչության միջոցով՝ պետական իշխանությունների, ոչ պետական միավորների և համայնքների հետ միասին:

1.7 Մարդու իրավունքներ վրա հիմնված մոտեցում ծրագրերի մշակմանը

ՅՈՒՆԻՍԵՖ-ը հավատարիմ է բոլոր մարդասիրական գործողություններում մարդու իրավունքների իրացման ընդլայնմանը՝ ծրագրերի մշակման հարցում մարդու իրավունքների վրա հիմնված մոտեցման շրջանակի միջոցով: Այս մոտեցմամբ հատկորոշվում են իրավունքների տիրապետողները և նրանց իրավունքները, ինչպես նաև՝ համապատասխան պարտականություններ կրողներին և նրանց պարտավորությունները: Այս մոտեցման նպատակն է ամրապնդել իրավունքների տիրապետողների կարողությունները՝ պահանջել իրավունքների իրացում, ինչպես նաև պարտականություններ կրողների կարողությունները՝ իրացնել սեփական պարտավորությունները: Այս մոտեցման առանցքում բնակչության անտեսված և լուսանցքում հայտնված խմբերի իրավունքների, ինչպես նաև այն իրավունքների իրացումն է, որոնք ենթակա են ոտնահարվելու ռիսկի: ԵԱՀ-ները երեխաներին և կանանց դնում են մարդասիրական գործողությունների կենտրոնում՝ որպես ակտիվ մասնակիցների, այլ ոչ թե որպես օժանդակություն ստացողների:

Ծրագրերի մշակման նկատմամբ մարդու իրավունքների վրա հիմնված մոտեցման կիրառումը պետք է համապատասխանեցվի մարդասիրական գործողություններ պահանջող իրավիճակներին և հաշվի առնի, մասնավորապես, լրացուցիչ մարտահրավերները, որոնք ծագում են բարդ մարդասիրական ճգնաժամային իրավիճակներում: Այն պետք է նաև հաշվի առնի բարդ արտակարգ իրավիճակներում մարդասիրական կազմակերպությունների դերը՝ որպես պարտականություններ կրողների, ինչպես սահմանված է միջազգային մարդասիրական իրավունքով:

ՅՈՒՆԻՍԵՖ-ը, գործընկերների աջակցությամբ, հանձն է առել ուժեղացնել մարդասիրական գործողություններում ծրագրերի մշակմանը մարդու իրավունքների վրա հիմնված մոտեցումը՝ հետևյալի միջոցով:

- Վերլուծությունների, ծրագրերի մշակման, իրականացման և մոնիտորինգի ընթացքում անդրադարձ անհավասարությունների և անհամաչափություն-ների խնդրին՝ գիտակցելով, որ անհավասարությունները կարող են

պատճառ հանդիսանալ կամ խորացնել խոցելիությունները մարդասիրական ճգնաժամերում:

- Երեխաների, դեռահասների, կանանց և ճգնաժամի ազդեցությանը ենթարկված բնակչության մասնակցության առաջմղում, ներառյալ՝ վերլուծության, մարդասիրական ծրագրերի մշակման և մոնիտորինգի փուլերում:
- Պետական իշխանության մարմինների և հասարակական ու համայնքային կազմակերպությունների կարողությունների ուժեղացում՝ որպես համատեղ իրականացվող և արդյունավետ մարդասիրական գործողությունների կարևորագույն ռազմավարություն:
- Երեխաների և կանանց իրավունքների և ձայնի պաշտպանության քարոզչություն և շահերի պաշտպանություն:

1.8 Գենդերային հավասարությունը մարդասիրական գործողություններում

Ծրագրերի մշակմանը մարդու իրավունքների վրա հիմնված մոտեցումը և գենդերային հավասարության ուղղվածությամբ ծրագրերի մշակումը փոխլրացնող և փոխադարձաբար ուժեղացնող մոտեցումներ են: «Գենդերային[4] հավասարություն» եզրույթը վերաբերում է աղջիկների, տղաների, կանանց և տղամարդկանց կողմից իրավունքներից, սոցիալական արժեք հանդիսացող ապրանքներից, հնարավորություններից, ռեսուրսներից և հատուցումներից հավասարապես օգտվելուն: Հավասարությունը չի նշանակում, որ աղջիկները, տղաները, կանայք և տղամարդիկ նույնն են, այլ այն, որ նրանց կողմից իրավունքներից, հնարավորություններից և կյանքի ընձեռած պատեհություններից օգտվելը չպետք է ղեկավարվի կամ սահմանափակվի այն հանգամանքով, թե արդյոք նրանք ծնվել են կին թե տղամարդ:

---

[4] «Գենդեր» եզրույթը վերաբերում է այն սոցիալական հատկանիշներին և հնարավորություններին, որոնք առնչվում են արական կամ իգական սեռին պատկանելու հետ և վերաբերում են աղջիկների, տղաների, կանանց և տղամարդկանց միջև հարաբերություններին: Այս հատկանիշները փոփոխական են՝ կախված համատեքստից և ժամանակաշրջանից: Հասարակությունների մեծամասնությունում գոյություն ունեն տարբերություններ և անհավասարություններ կանանց և տղամարդկանց ստանձնած պարտավորությունների, նրանց կողմից ձեռնարկվող գործողությունների, ռեսուրսների հասանելիության և դրանց վերահսկողության, ինչպես նաև որոշումների կայացման հնարավորությունների միջև (Գենդերային խնդիրների և կանանց առաջխաղացման հարցերով հատուկ խորհրդականի գրասենյակ, «Գենդերային հարցերն առանցքային դարձնելու հիմքում ընկած կարևոր հայեցակարգեր» [“Important Concepts Underlying Gender Mainstreaming”], Փաստաթերթիկ թիվ 2, OSAGI, Նյու Նորք, օգոստոս, 2001 թվական):

Մարդասիրական ճգնաժամերը կարող են խորացնել նախապես գոյություն ունեցող գենդերային անհավասարությունները և կարող են հանգեցնել հարաճուն ռիսկերի, բացառման և խտրականության: Դրանք կարող են նաև, այդուհանդերձ, ընձեռել դրական փոփոխության հնարավորություններ՝ թույլ տալով կատարել ավանդական դերերի, վերաբերմունքի, համոզմունքների և մեկուսացման գործելաոճի փոփոխում:

ՅՈՒՆԻՍԵՖ-ը հանձն է առել ապահովել, որ գենդերային հավասարությունը հետևողականորեն ներգծված է աղետների կանխարգելման, մարդասիրական արձագանքման և վերականգնման սեփական ծրագրերում: Մարդասիրական գործողություններում գենդերային հավասարությունը խթանելը ամենից արդյունավետ իրականացվում է՝ ապահովելով, որ տրամադրվող օժանդակությունը և պաշտպանությունը պլանավորվեն և կենսագործվեն աղջիկներին, տղաներին, կանանց և տղամարդկանց օգուտ տալու նկատառումով՝ նրանց իրավունքների, կարիքների և կարողությունների վերլուծության համապատասխան: Սա իր հերթին նպաստում է իրավիճակի ավելի ճշգրիտ ընկալմանը, օգնում է առավել տեղին արձագանքման մշակմանը, տուժած համայնքում վեր է հանում հնարավորությունները և ռեսուրսները և ապահովում է մարդասիրական օժանդակության և երկարաժամկետ զարգացման միջև կապը:

1.9 «Մի վնասիր» սկզբունքը

ՅՈՒՆԻՍԵՖ-ը հավատարիմ է՝ կենսագործելու «Մի վնասիր» սկզբունքը: Սա ենթադրում է, որ մարդասիրական գործողությունները պարտադիր պետք է՝

- Խուսափեն անհամաչափությունների խորացումից և պետք է խուսափեն տուժած բնակչության տարբեր խմբերի միջև ճգնաժամի պատճառների հիմքով խտրականությունից:
- Խուսափեն շրջակա միջավայրի վատթարացում առաջացնելուց կամ դա խորացնելուց:
- Խուսափեն բնակչության տուժած խմբերի միջև հակամարտություն և անապահովություն ստեղծելուց կամ դրանք խորացնելուց:
- Հաշվի առնեն երեխաների և կանանց ամենախոցելի խմբերի (ներառյալ՝ ներքին տեղահանված անձանց, առանց ուղեկցողի մնացած անչափահասները, հաշմանդամություն ունեցող անձինք) հատուկ կարիքները և մշակեն տեղին ու նպատակային ծրագրային միջամտություններ:

1.10 Համաշխարհային նորմեր և ստանդարտներ

Իր մարդասիրական ջանքերում ՅՈՒՆԻՍԵՖ-ը հաշվետու է՝ համաձայն համաշխարհային նորմերի և ստանդարտների մի համակազմի, որը ձևավորված է ինչպես միջկառավարական ֆորումներից, այնպես էլ մարդասիրական գործընկերություններից: Այս նորմերը և ստանդարտները ներառում են.

- *Մարդու իրավունքների պաշտպանության միջազգային իրավունքը և մարդու իրավունքների* սկզբունքները, ներառյալ՝ Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան և Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիան:
- *Միջազգային մարդասիրական իրավունքը*, ներառյալ Ժնևի կոնվենցիաները, որը նպաստում է զինված հակամարտություններում մարդասիրական գործակալությունների դերերի և պարտավորությունների սահմանմանը:
- *Մարդասիրական սկզբունքները*, որոնք բխում են միջազգային մարդասիրական իրավունքից և նկարագրված են Ընդհանուր վեհաժողովի (Գլխավոր ասամբլեա) բանաձևերից, և որոնք ենթակա են կիրառման մարդասիրական բոլոր գործողություններում:
- *Ընդհանուր վեհաժողովի բանաձևերը*, մասնավորապես՝ թիվ 46/182 բանաձևը, որով ստեղծվեց Միջգործակալական մշտական հանձնաժողովը (ՄԳՄՀ) և Միավորված ազգերի կազմակերպությանը հանձնարարվեց, այլ անելիքների թվում, աջակցել և ուժեղացնել պետությունների կողմից արտակարգ իրավիճակներին արձագանքելու կարողությունները, որպեսզի բնական աղետներից և այլ արտակարգ իրավիճակներից տուժածներն ստանան խնամքի ծառայություններ:
- *Անվտանգության խորհրդի վերաբերելի բանաձևերը*, ներառյալ նրանք, որոնք անդրադառնում են զինված հակամարտություններից տուժող երեխաների պաշտպանությանը:
- *Գոյություն ունեցող և ձևավորվող համաշխարհային մարդասիրական ստանդարտները*, ներառյալ Մարդասիրական խարտիան և աղետներին արձագանքման նվազագույն ստանդարտները («Sphere» ստանդարտներ) և Արտակարգ իրավիճակներում կրթության միջգործակալական ցանցի (ԱԻԿՄՑ/INEE) նվազագույն ստանդարտները, որոնք սահմանում են նվազագույն ստանդարտները մարդասիրական օժանդակության առանցքային ոլորտներում, որպեսզի բարելավվի աղետներից տուժած բնակչությանը տրամադրվող աջակցության որակը և կատարելագործվի

աղետներին արձագանքման ասպարեզում մարդասիրական համակարգի հաշվետվականությունը:

1.11 Մոնիտորինգ, վերլուծություն և գնահատում

ՅՈՒՆԻՍԵՖ-ը հանձն է առել աջակցել մարդասիրական գործողություններին՝ գործընկերների հետ համակարգված ձևով կատարողականի պարբերական մոնիտորինգի, վերլուծության և գնահատման միջոցով՝ ըստ հենանիշների: Ասվածը ենթադրում է հետևյալը.

- Երեխաների, դեռահասների և կանանց վիճակի շարունակական մոնիտորինգ և վերլուծություն՝ ինչպես ինքնուրույն, այնպես էլ գործընկերների հետ միասին, որպեսզի ապահովվի համատեղ արագ գնահատումների և չուշացած մարդասիրական արձագանքման իրականացումը:
- Աջակցություն մարդասիրական գործողություններին՝ հիմնվելով գործընկերների և բնակչության տուժած խմբերի, այդ թվում՝ երեխաների, դեռահասների և կանանց հետ միասին իրականացված արագ գնահատումների վրա: Այս գնահատումները, որոնք անց են կացվում միասնական միջգործակալական մեխանիզմների միջոցով կամ ինքնուրույնաբար, մարդասիրական արձագանքման ձևակերպման գործընթացում առաջին վճռական քայլն է
- Առաջընթացի չափում՝ բացահայտելու երեխաների և կանանց համար ստացված արդյունքները՝ համաձայն հենանիշների, անդրադառնալու վերհանված բացերին և ավելի լավ ղեկավարելու արդյունքում մշակված մարդասիրական արձագանքումը: ԵԱՀ-ներում ամրագրված հենանիշները ներկայացնում են մարդասիրական արձագանքման՝ համաշխարհային մակարդակով ընդունված կատարողականի մակարդակներ, որոնք բխում են միջգործակալական ստանդարտներից, ներառյալ «Sphere» ստանդարտները և ԱԻԿՄՑ նվազագույն ստանդարտները: ՅՈՒՆԻՍԵՖ-ը և իր գործընկերները կսահմանեն համապատասխան ներդրումները՝ ուղղված հենանիշներին հասնելուն՝ յուրաքանչյուր երկրի համատեքստին համահունչ և երկրի մարդասիրական թիմի (ԵՄԹ) համատեքստերի և կլաստերային համակարգման ջանքերի սահմաններում:
- Գնահատում՝ ապահովելու ավելի խոր վերլուծություն և կատարողականի համապատասխանեցում տվյալ շրջարկին՝ հաշվի առնելով հասանելիության, անվտանգության և ֆինանսավորման առկայության խնդիրները:

- ԵԱՀ-ների հետ կապված սեփական կատարողականի համապատասխանեցում կազմակերպական ավելի լայն կառավարման հաշվետվականության և վերահսկման գործառույթներին՝ համաձայն ՅՈՒՆԻՍԵՖ-ի հաշվետվականության շրջանակի: Սա ուղեկցվում է ինչպես պատրաստվածության, այնպես էլ արձագանքման հանձնառությամբ:

Գիտակցելով գործընկերների կողմից տարբեր մոտեցումների առկայությունը՝ ՅՈՒՆԻՍԵՖ-ի կանոնավոր աուդիտի սկզբունքները և աշխատաեղանակները լիարժեքորեն կկիրառվեն կազմակերպության կողմից աջակցություն վայելող մարդասիրական գործողություններում: Երբ հնարավոր է, ՅՈՒՆԻՍԵՖ-ը աուդիտ կիրականացնի մարդասիրական գործողությունների վաղ փուլերում, որպեսզի հնարավոր լինի շտկումներ անել ընթացիկ ծրագրերում:

1.12 Միջգործակալական մարդասիրական բարեփոխում

Համակարգումը և համագործակցությունը մարդասիրական գործողությունների հաջողության համար ունեն վճռորոշ նշանակություն: ՅՈՒՆԻՍԵՖ-ը լիովին նվիրված է մարդասիրական ասպարեզում միջգործակալական բարեփոխումներին և դրանց աջակցում է հետևյալ կերպ.

- Առաջնորդության ապահովում և մասնակցություն որոշված կլաստերներում և ոլորտներում:
- Գործընկերություններ, որոնք ՅՈՒՆԻՍԵՖ-ին դրդում են գործակցային և սկզբունքային աշխատանքի՝ այնպես, որ դա համահունչ լինի միջազգայնորեն ընդունված նորմերին և ընդլայնի Գործընկերության սկզբունքների գործնական կիրառումը:
- Գործընկերների ֆինանսավորում, որը ժամանակային առումով ուշացած չէ և ճկուն է:
- Մասնակցություն և ներդրում մարդասիրական գործողությունների արդյունավետ ռազմավարական ղեկավարմանը:

1.13 Միասնական (ինտեգրված) ծրագրային մոտեցում

Կիրառվում է միասնական ծրագրային մոտեցում՝ ապահովելու տարբեր ոլորտային հանձնառությունների միջև սերտ կապը, ինչպես նաև ամրապնդելու փոխկապվածությունները մարդասիրական գործողությունների տարբեր փուլերի միջև: Ինտեգրմանը հնարավոր է լինում հասնել հետևյալի միջոցով.

- Աղետների ռիսկի նվազեցումն օգտագործել՝ նվազագույնի հասցնելու խոցելիությունները և նվազեցնելու աղետների ռիսկերը երեխաների և

կանանց համար՝ ծրագրերի մշակման և իրականացման բոլոր փուլերում: Սրան հասնում են՝ ներդրումներ կատարելով վաղ ահազանգման և արտակարգ իրավիճակներին պատրաստվածության ոլորտներում և զարգացնելով աղետների նկատմամբ դիմակայունությունը:

- Ապահովել, որ աղետներին պատրաստվածություն ստանա վճռական դեր, որը կհանգեցնի արագացված, արդյունավետ և չուշացած մարդասիրական արձագանքման:
- Արդյունքների և ստանդարտների կառավարում՝ ապահովելու, որ բոլոր ծրագրային միջամտությունների հանրագումարը բավարարի՝ հասնելու ակնկալվող արդյունքներին: Այս գործընթացն առաջ է տարվում ռազմավարական կառավարման որոշումների կայացմամբ, որոնք հիմնված են թարմ տվյալների, գնահատումների, հենանիշների, թիրախային ցուցանիշների և կատարողականի մոնիտորինգի վրա և բխում են թվարկվածից:
- Մարդասիրական արձագանքմանը զուգահեռ՝ սկսել վաղ վերականգնում, որպեսզի հնարավոր լինի պահպանել կյանքեր փրկող միջամտությունների արդյունքները, աջակցել վերականգնման գործողություններին, որոնք ինքնուրույնաբար ձեռնարկում է տուժած բնակչությունը, օգտվել վերականգնման վաղ ծագած հնարավորություններից և նվազեցնել ապագա ճգնաժամերի ռիսկերի նկատմամբ խոցելիության աստիճանը: ՅՈՒՆԻՍԵՖ-ն ակտիվորեն կներգրավվի վաղ արձագանքման և հետճգնաժամային միջգործակալական մեխանիզմներում, ներառյալ՝ կարիքների գնահատումները, վերականգնման ռազմավարությունները, ռեսուրսների հավաքագրումը, ծրագրի կատարողականը և միասնական առաքելությունների պլանավորման գործընթացները բոլոր մակարդակներում, տեղակայումից անմիջապես հետո:

1.14 Շահերի պաշտպանություն և քարոզչություն

Համարվում է, որ շահերի պաշտպանությունը և քարոզչությունը հանդիսանում են նպատակադրված ջանքեր, որոնք հիմնված են ակնառու ապացույցների վրա և ուղղված են որոշում կայացնողներին համոզելուն՝ որդեգրելու այնպիսի քաղաքականություններ և ձեռնարկելու միջոցառումներ՝ խթանելու և պաշտպանելու երեխաների և կանանց իրավունքները մարդասիրական ճգնաժամային իրավիճակներում: Շահերի պաշտպանության նպատակն է փոխանցել սեփական տեսակետների հիմնավորվածությունը և առաջնայնությունը. այն օգնում է լուծումներ գտնել որոշիչ նշանակություն ունեցող մարդասիրական ծրագրերի խնդիրների կամ

քաղաքականությունների բացերին: Երեխաների և կանանց շահերի պաշտպանությունը՝

- Հանդիսանում է մարդասիրական գործողությունների անքակտելի մասը:
- Պետք է հատուկ լինի համատեքստին և, հնարավորության դեպքում, լինի ապացուցահեն: Այն պետք է ուղղված լինի շահագրգիռ կողմերի ամբողջ շարքին, այդ թվում՝ կառավարություններին, քաղաքականություններ մշակողներին, միջազգային կազմակերպություններին և ոչ կառավարական կառույցներին:
- Պետք է հիմնված լինի Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի և Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի և այլ միջազգային իրավական գործիքների, խաղաղության հաստատման համաձայնագրերի և կառավարությունների և հասարակական կազմավորումների կողմից ստանձնած այլ հանձնառությունների վրա:
- Լավագույն արդյունք տալիս է, երբ ձեռնարկվում է կոլեկտիվ ձևով և այլոց հետ գործընկերությամբ:
- Հանգեցնում է կոնկրետ գործողությունների, որոնք ուղղված են ավելի մեծ քաղաքական, ,մարդկային և ֆինանսական աջակցություն ներգրավելուն: Նպաստում է մարդասիրական գործողությունների հասանելիության բարելավմանը, խթանում է միջազգային իրավունքին և ստանդարտներին հետևելը և երեխայի իրավունքները խախտողների դեպքում հանգեցնում է պատասխանատվության: Մարդասիրական ճգնաժամի իրավիճակում շահերի պաշտպանության և քարոզչության բացակայությունը կարող է ուղղակի ազդեցություն ունենալ ՅՈՒՆԻՍԵՖ-ի և գործընկերների՝ ծառայություններ մատուցելու կարողության վրա:

ՅՈՒՆԻՍԵՖ-ը, իր գործընկերների հետ համագործակցությամբ, պատշաճ ձևով հաշվի կառնի շահերի պաշտպանության ռազմավարություններում ներգրավվելու հնարավոր բացասական հետևանքները անձնակազմի անվտանգության, երկրում իրականացվող ծրագրերի և բնակչության խոցելի խմբերի վրա:

1.15 Հաղորդակցություն հանուն զարգացման

Զարգացման ուղղված հաղորդակցությունն արտակարգ իրավիճակներում ձգտում է տարածել վերաբերելի, գործողությունների միտված տեղեկություններ, որպեսզի երբ որևէ աղետ տեղի ունենա, դրա ազդեցությանը ենթարկված համայնքների բնակչությունն իմանա, թե ինչ քայլեր պետք է ձեռնարկի՝ տվյալ համայնքի բոլոր անդամների (ներառյալ՝

հաշմանդամություն ունեցող անձանց, տարեցների և այլ հատկապես խոցելի խմբերի) առողջությունն ու բարեկեցությունը պահպանելու և պաշտպանելու համար: Դա ծրագրային և հաղորդակցության մասնագետների, տեղական իշխանությունների, փոփոխություններ հարուցող անձանց և համայնքների միջև մի խորհրդակցական գործընթաց է:

Սխալ է ենթադրել, որ մարդասիրական ճգնաժամային իրավիճակներից տուժված համայնքները չափազանց մեծ ցնցում են ապրել և անօգնական են, որպեսզի ստանձնեն որոշակի պարտավորություններ: Իրականում բազմաթիվ մարդիկ, նրանց թվում՝ երեխաներ, ի վիճակի են նորմալ վիճակի վերադառնալ ավելի արագ, երբ նրանք մասնակցում են արտակարգ իրավիճակի ընթացքում և դրանից հետո ուրիշներին և իրենք իրենց օգնելուն: Զարգացմանն նպատակով հաղորդակցությունը կարող է օգնել՝ հասնելու հետևյալին.

- Աջակցել ծրագրային ոլորտներին՝ բնակչության տուժած խմբերի չափահասներին, երեխաներին և երիտասարդներին ճգնաժամի ծագումից սկսած խորհրդատվություն տրամադրելու գործում: Պարզվել է, որ սա կարևորագույն գործոն է՝ մահերի քանակը նվազեցնելու և հոգեբանական կազդուրումը, փոխադարձ կապերը և սոցիալական համախմբումն առաջ մղելու տեսակետից:
- Ձևավորել դաշինքներ և համախմբել շահագրգիռ կողմերին:
- Ստեղծել առողջապահական կրթության կենտրոնական և հաղորդակցության համակարգման կենտրոն:
- Ուշադրությունը սևեռել անհատական և սոցիալական դրական վարքագծերի ստեղծման կամ վերստեղծման շուրջ:
- Իրականացնել հաղորդակցության ուղիների և ռեսուրսների արագացված գնահատում:
- Մասնակցել ոլորտային գնահատումների, որոնք օգնում են վերհանել բարձր ռիսկայնություն ունեցող վարքագծերը, որոնք հետևանքներ են ունենում վարքի փոփոխության նպատակ հետապնդող հաղորդակցության վրա, ինչպես նաև բացահայտել համայնքահեն արձագանքման մեխանիզմների մշակման հնարավորությունները:

1.16 Ռիսկի կառավարում և գնահատում

ՅՈՒՆԻՍԵՖ-ի բոլոր գործընկերություններում և ծրագրերում պահանջվում է հետևողական և միանման մոտեցում ռիսկերի հատկորոշմանը, գնահատմանը և կառավարմանը: Ռիսկերի կառավարման ուժեղացումը հատկապես կարևոր է մարդասիրական գործողություններում՝

անվտանգությանն առնչվող հարաճուն ռիսկերի և աղետների ռիսկերի, ինչպես նաև գործառնությունների ավելի բարդ միջավայրի պատճառով: Ռիսկի կառավարման ՅՈՒՆԻՍԵՖ-ի սկզբունքները[5] ներառում են հետևյալը.

- Ընդունել ռիսկը այն դեպքում, երբ ծախսերի համեմատությամբ օգուտները գերակշռում են կանխատեսել և կառավարել ռիսկը արտակարգ իրավիճակներում գործողությունների պլանավորման և բացահայտված ռիսկերի մեղմման միջոցով:
- Ժամանակին կայացնել որոշումներ՝ գիտակցելով, որ ռիսկերի հաստատողական կառավարումը հաջողության հասնելու տեսակետից ունի վճռական նշանակություն: Լավագույն ռազմավարությունը կարող է ներառել ռիսկերին արձագանքման տարբեր տեսակների համադրություն:
- Ստանձնել հաշվարկված ռիսկեր և հետամուտ լինել նորարարությունների , որոնք չեն հակասում վերահսկողության միջոցներին կամ համապատասխանության պահանջներին, խրախուսել նորարարական գործողություններ՝ միևնույն ժամանակ կիրառելով կառավարման անվտանգ աշխատաեղանակներ:

[5] Միավորված ազգերի կազմակերպության Մանկական հիմնադրամ, «Ռիսկի կառավարման ՅՈՒՆԻՍԵՖ-ի քաղաքականությունը» [“UNICEF Risk Management Policy”], ՅՈՒՆԻՍԵՖ, Նյու Յորք, մայիս, 2009 թվական:

II. Ծրագրային հանձնառություններ

Մարդասիրական գործողություններում Երեխաների համար առանցքային հանձնառությունների ծրագրային բաժինը հիմնված է համապատասխան ծրագրային ոլորտներում ընդունված համաշխարհային ստանդարտներից բխող հենանիշների վրա: Դրանք մշակված են ՅՈՒՆԻՍԵՖ-ին և վերջինիս գործընկերներին՝ յուրաքանչյուրի կարողություններով պայմանավորված համագործակցության շրջանակներում նախանշված հենանիշներին հասնելու ճանապարհին գործողությունների ճկունություն ապահովելու նպատակով:

ԵԱՀ հենանիշները մարդասիրական գործողությունների համատեքստում ընդունված կատարողականի մակարդակներն են, որոնք մշակվել են միջգերատեսչական ստանդարտների, ներառյալ Արտակարգ իրավիճակներում կրթության միջգործակալական ցանցի Նվազագույն ստանդարտների և «Sphere» ստանդարտների հիման վրա, ինչպես նաև միջգերատեսչական և կլաստերային ֆորումներում քննարկումների արդյունքում (մասնավորապես երեխաների պաշտպանությանը վերաբերող հենանիշների դեպքում): Համաշխարհային մակարդակով ընդունված հենանիշների կիրառումը ապահովում է ԵԱՀ-ների համապատասխանությունը մարդասիրական բարեփոխումներին:

ՅՈՒՆԻՍԵՖ-ի ներդրումը ծրագրային հանձնառություններում իրականացվում է ծրագրային գործողությունների միջոցով: Լավագույն փորձի հիման վրա և, ընդունելով այն փաստը, որ գործընկերները կիրականացնեն մարդասիրական գործողություններում երեխաների համար մշակված համաշխարհային հենանիշներին նպաստելու տարբեր ռազմավարություններ, ՅՈՒՆԻՍԵՖ-ը սահմանել է յուրաքանչյուր ոլորտային հանձնառությանը նպաստող պատրաստվածության, արձագանքման և արագ վերականգնման հիմնական գործողությունները:

Ոլորտային ծրագրային հանձնառությունները ներառում են հետևյալը. սնուցում, առողջապահություն, ջուր, սանիտացիա և հիգիենա (WASH/ՋՍՀ), ՄԻԱՎ և ՁԻԱՀ, կրթություն և երեխաների պաշտպանություն: Այս գործողություններին նպաստում են իրավիճակի արագ գնահատումը, մոնիտորինգը և գնահատումը, գործառնական հանձնառությունները, մատակարարումը, զարգացմանը միտված տեղեկատվական միջոցները և անվտանգությունը (տե՛ս *Գծապատկեր 3*):

Գծապատկեր 3. Ծրագրային և գործառնական հանձնառություններ



2.1 Կատարողականի մոնիտորինգ

ԵԱՀ հենանիշերի նկատմամբ առաջընթացի գնահատման համար ՅՈՒՆԻՍԵՖ-ն օգտագործում է իր կատարողականի մոնիտորինգային համակարգը: Գործընկերներն իրենց կատարողականի մոնիտորինգի համար կարող են կիրառել այլ գործիքներ:

Առաջընթացի մոնիտորինգը ՅՈՒՆԻՍԵՖ-ի կատարողականի ընդհանուր կառավարման համակարգի մաս է (տե՛ս *Գծապատկեր 4*): Այս գործողությունը իրազեկում է ԵԱՀ հենանիշերի նկատմամբ առաջընթացի մասին, ուշադրությունը հրավիրելով այն բացթողումներին, որոնք դեռևս շտկման կարիք ունեն: Կատարողականի մոնիտորինգը չափազանց կարևոր է, քանի որ այն առաջ է քաշում այն ոլորտները, որտեղ ԵԱՀ հենանիշները պատշաճ կերպով չեն

իրականացվում, ինչպես նաև այդ բացթողումների շտկման համար անհրաժեշտ միջոցների հավաքագրման առումով:

Մոնիտորինգը ղեկավարությանը տրամադրում է ԵԱՀ-ի ներքո երեխաների և կանանց համար գրանցված արդյունքների որակի, քանակի և ժամանակային առումով ուշացած չլինելու վերաբերյալ տեղեկություններ: ԵԱՀ կատարողականի մոնիտորինգն ունի յուրաքանչյուր հենանիշի համար մշակված համապատասխան ինդիկատորներ: Այնտեղ, որտեղ մոնիտորինգային ստանդարտ ինդիկատորները կիրառելի չեն, օգտագործվում են փոխանորդ ինդիկատորներ:

Գծապատկեր 4. ԵԱՀ կատարողականի մոնիտորինգ



Տվյալների հավաքագրումը պահանջում է գործընկերների համագործակցություն: Տվյալները պետք է գրանցվեն երեք համակարգերի միջոցով.

- Ազգային գրասենյակի հաշվետվություններ, DevInfo կամ այլ պետական կամ ԵՄԹ միջավայրում աշխատող պլատֆորմներ, որոնք նախատեսված են ծրագրային արդյունքների մասին հաշվետվությունների համար:
- ՅՈՒՆԻՍԵՖ-ի ռեսուրսների պլանավորման և կատարողականի կառավարման համակարգը, Տեղեկատվության վիրտուալ ինտեգրացված համակարգը (VISION) :
- ՅՈՒՆԻՍԵՖ-ի արագ ահազանգման/ արագ արձագանքման (EW/EA) պատրաստվածության մակարդակի մասին հաշվետվությունների համակարգը:

Ազգային գրասենյակի ներկայացուցիչները պատասխանատու են համաձայնեցված ԵԱՀ հենանիշների վերաբերյալ տվյալների հավաքագրման, վերլուծության և դրանց մասին հաշվետվության համար: Անհրաժեշտության դեպքում, նրանք պետք է նաև մշակեն տվյալ երկրին բնորոշ փոխանորդ ինդիկատորներ: ԵԱՀ կատարողականի մոնիտորինգը պետք է նպաստի արագ փոփոխվող իրավիճակներում որոշումների կայացմանը: ԵԱՀ հենանիշների մոնիտորինգը և դրանց մասին հաշվետվությունները պետք է իրականցվեն և կազմվեն բավարար հաճախականությամբ, սահմանվեն Ազգային և Տարածաշրջանային գրասենյակների կողմից ըստ անհրաժեշտության, ինչպես նաև պետք է ներառեն գենդերին վերաբերող տվյալների հավաքագրում:

2.2 Իրավիճակի արագ գնահատում, մոնիտորինգ և գնահատում

Ռազմավարական արդյունք. Իրավիճակի արագ գնահատում, մոնիտորինգ և գնահատում		
Աղջիկների, տղաների և կանանց համար իրականացվող մարդասիրական գործողությունները ժամանակին են, արդյունավետ և ծախսարդյունավետ		
Հանձնառություններ		**Հենանիշներ**
Հանձնառություն 1. Երեխաների և կանանց կարգավիճակը ենթարկվում է մոնիտորինգի և վերլուծության, իրավիճակի արագ գնահատումներն իրականացվում են ըստ անհրաժեշտության:	→	**Հենանիշ 1.** Բոլոր հումանիտար իրավիճակների համար ժամանակին իրականացվում է արագ գնահատում:
Հանձնառություն 2. Կատարողականի ուղենշման համակարգերը պարբերաբար մոնիտորինգի են ենթարկվում ՅՈՒՆԻՍԵՖ-ի մարդասիրական գործողությունը, այդպիսով նպաստելով ԵԱՀ իրականացման չափումներին:	→	**Հենանիշ 2.** Կատարողականի հենանիշների մշակման և իրականացման ընթացքում պետք է կիրառվեն ԵԱՀ-ները, կանոնները և կից ուղեցույցները, ինչպես նաև ՅՈՒՆԻՍԵՖ-ի որակի և հաշվետվականության ստանդարտները:
Հանձնառություն 3. Մարդասիրական գործողությունը պարբերաբար գնահատվում է ԵԱՀ-ի, քաղաքականության, ուղեցույցների, ՅՈՒՆԻՍԵՖ-ի հաշվետվականության և որակի ստանդարտների և մարդասիրական գործողության սահմանված նպատակների նկատմամբ՝ հնարավորության սահմաններում գործընկերների հետ համատեղ իրականացվող գնահատման միջոցով:	→	**Հենանիշ 3.** Չկանխատեսված արտակարգ իրավիճակի առաջին երեքից չորս ամիսների ընթացքում կամ քրոնիկական աղետի պայմաններում սովորական ռազմավարական պլանավորման մաս դարձած գնահատման գործողություն. արդյունքների գնահատում կամ ավելի թեթև ստուգում՝ կախված համատեքստից և առկա ռեսուրսներից:

Ծրագրային գործողություններ

Պատրաստվածություն

- Բավարար ճշգրտությամբ հետևել և վերլուծել բոլոր առկա և հնարավոր արտակարգ իրավիճակները, ներառյալ այն տարածքներում, որոնք ընդգրկված չեն ազգային ծրագրերում, ինչը թույլ կտա անհրաժեշտության դեպքում մեկնարկել իրավիճակի արագ գնահատում:
- Իրականացնել գրասենյակի պատրաստվածության, ներառյալ արտակարգ իրավիճակներին պատրաստվածության և դրանց արձագանքման պլանի առկայության և պատրաստվածության ծրագրային գործողությունների իրականացման մոնիտորինգ՝ արագ հայտնաբերման/արագ արձագանքման համակարգի միջոցով:

- Հայտնաբերել առկա վտանգներին, խոցելի կողմերին և կարողություններին վերաբերող տվյալներ, որոնք կիրազեկեն նախնական գնահատման, արձագանքման և վերականգնման գործընթացները:
- Համագործակցել այլ կազմակերպությունների հետ անհրաժեշտ մեթոդաբանության, գործիքների և տեղեկատվության կառավարման համակարգերի մշակման գործում, ինչպես նաև գնահատել ժամանակին իրավիճակի արագ գնահատում իրականացնելու համար անհրաժեշտ միջգերատեսչական վերապատրաստված կարողությունները:
- Նշանակել անհրաժեշտ որակավորում ունեցող աշխատակիցների, որոնք կապահովեն յուրաքանչյուր ոլորտում կատարողականի մոնիտորինգը:
- Ապահովել ազգային գրասենյակում կատարողականի մոնիտորինգի հենանիշների առկայությունը, ներառյալ կլաստերների միջոցով:

Արձագանքում

- Ապահովել, որ իրավիճակի արագ գնահատումն իրականացվի աղետից տուժած բնակչության հատվածի, ներառյալ երեխաների, դեռահասների և կանանց, շրջանում, որպես միացյալ միջգերատեսչական մեխանիզմ կամ, անհրաժեշտության դեպքում, անկախ, որի արդյունքների հիման վրա հնարավոր լինի սահմանել առաջնային մարդասիրական գործողությունները:
- Ապահովել, որ գնահատումները ներառեն նաև գենդերային վերլուծություն:
- Ապահովել, որ աղետի մասին տեղեկացնող արագ հայտը և արձագանքման գործողությունները հիմնված լինեն աջակցության անցումային խնդիրների/նպատակների (SMART) ստանդարտացված մոնիտորինգի և իրավիճակի գնահատման, ինչպես նաև առկա նախնական գնահատման տեղեկությունների վրա, և, որ դրանք մշակվեն այնպես, որ նպաստեն մոնիտորինգին:
- Սահմանել արդյունքների գնահատման նպատակները և խորությունը՝ հումանիտար ճգնաժամի մասշտաբի և խստության մակարդակի հիման վրա:
- Համակարգված կերպով հավաքագրել արձագանքման գործողությունների վերաբերյալ փաստաթղթերը՝ մոնիտորինգի և արդյունքների գնահատման ընթացքում օգտագործելու նպատակով:
- Ապահովել, որ բոլոր ոլորտներում կատարողականի վերաբերյալ բոլոր հիմնական տվյալները հավաքագրվեն համակարգված կերպով, լինեն մատչելի և կատարողականի մակարդակի բարձրացման նպատակով օգտագործվեն ստուգման գործընթացներում, և որ դրանք հիմք կծառայեն արդյունքների հետագա գնահատման համար:

- Ապահովել, որ մարդասիրական գործողության արդյունքների գնահատումները գրանցեն կազմակերպության համար «քաղած դասեր»:

Արագ վերականգնում

- Ապահովել, որ իրավիճակի արագ գնահատումները ներառեն արագ վերականգնման կարիքների և կարողությունների գնահատում: Հնարավորության և հարմարության դեպքում, նման գնահատումները պետք է իրականացվեն պետական կամ տեղական իշխանությունների, ինչպես նաև աղետից տուժած բնակչության հետ համատեղ: Իրավիճակի արագ գնահատումներն իրականացնել արագ վերականգնման կլաստերի/ցանցի հետ համատեղ՝ վերջինիս առկայության պարագայում:
- Աջակցություն տրամադրել մոնիտորինգի մեխանիզմների կայացման ջանքերին, ներառյալ դրանց ինտեգրմանը պետական, տեղական և համայնքային համակարգերին:
- Ապահովել, որ արագ վերականգնման ծրագրերը մշակվեն, հնարավորության դեպքում, աղետից տուժած բնակչության և պետական և/կամ տեղական իշխանությունների մասնակցությամբ՝ համաձայն արդյունքների վրա հիմնված շրջանակի:
- Հնարավորության և հարմարության պարագայում, ապահովել պետական և/կամ տեղական իշխանությունների մասնակցությունը արագ վերականգնման ծրագրերի արդյունքների գնահատման գործում: Արդյունքների գնահատման սեղմագրերը պետք է կազմվեն, թարգմանվեն և մատչելի դարձվեն գործընկերների համար:

2.3 Սնուցում

Ռազմավարական արդյունք. սնուցում		
Աղջիկների, տղաների և կանանց սնուցումը պաշտպանված է ճգնաժամի հետևանքներից		
Հանձնառություններ		**Հենանիշներ**
Հանձնառություն 1. Հիմնված է սնուցման կլաստերի միջգերատեսչական համակարգման արդյունավետ կառավարման մարմին, որը միջոլորտային առանցքային հարցերի մասով կապված է այլ կլաստերներ/ ոլորտներ համակարգող մեխանիզմների հետ:	→	**Հենանիշ 1**. Համակարգման մեխանիզմը բոլոր գործընկերներին տրամադրում է ուղեցույց ընդհանուր ստանդարտների, ռազմավարությունների և մոտեցումների վերաբերյալ, ապահովելով, որ հայտնաբերվեն սնուցման ոլորտի բոլոր կարևոր բացթողումներն ու խոցելի կողմերը, ինչպես նաև տրամադրում է տեղեկատվություն դերերի, պարտականությունների և հաշվետվականության վերաբերյալ՝ առանց կրկնողության բոլոր բացերի վերացման նպատակով:
Հանձնառություն 2. Սնուցման մակարդակի պատշաճ ժամանակին գնահատման և հսկողության համակարգերը ստեղծված են և/կամ հզորացված են:	→	**Հենանիշ 2**. Ժամանակին իրականացվում է որակի գնահատման հաշվետվություն, որը որոշումների կայացման համար բավարար տվյալներ է տրամադրում, ներառյալ սնուցման ոլորտի խնդիրների տարածվածության և խորության, թերսնուցման հիմնարար պատճառների և համատեքստի գործոնների վերաբերյալ:
Հանձնառություն 3. Ճգնաժամից տուժած կանանց և երեխաների համար հասանելի է նորածինների և երեխաների համապատասխան սնուցման աջակցությունը:	→	**Հենանիշ 3.** Աղետից տուժած բոլոր տարածքներում ներկա են բավարար թվով հմուտ ՄՎՏԵՍ խորհրդատուներ և/կամ գործող աջակցության խմբեր:
Հանձնառություն 4. Սուր թերսնուցված երեխաների ու կանանց համար հասանելի են համապատասխան ծառայությունները:	→	**Հենանիշ 4**. Սուր թերսնուցման արդյունավետ բուժումը (վերականգնման հայտանիշը բարձր է 75%-ից, իսկ մահացության հայտանիշը թերապևտիկ բուժման շրջանում՝ ցածր 10%-ից և խնամքի շրջանում՝ 3%-ից) հասանելի է թիրախային բնակչությանը (ծածկույթը կազմում է գյուղական տարածքի 50%-ից ավելին, քաղաքային տարածքի 70%-ից ավելին, ճամբարներում՝ 90%-ից ավելին):
Հանձնառություն 5. Երեխաներն ու կանայք անհրաժեշտ միկրոէլեմենտներ են ստանում հարստացված սննդի, սննդային հավելումների կամ մի շարք միկրոէլեմենտների պատրաստուկներից:	→	**Հենանիշ 5**. Տուժած բնակչության շրջանում միկրոէլեմենտների հետ կապված կարիքները բավարարված են. Սննդային հավելումների գործողությունների արդյունքում ավելի քան 90%-ը, կամ կանանց և երեխաների 90%-ից ավելի համար հասանելի են միկրոէլեմենտների լրացուցիչ աղբյուրներ:
Հանձնառություն 6. Երեխաներն ու կանայք իրազեկված են սնուցման ծրագրերի մասին:	→	**Հենանիշ 6**. Սնուցման ոլորտի ծառայությունների (ներառյալ որտեղ և ինչպես դրանք գտնել) և իրավասությունների մասին տեղեկատվական գործողություններն իրականացվում են աղետից տուժած բոլոր տարածքներում:

Տեխնիկական հիմնավորում/ապացույցներ. Սնուցման ԵԱՀ-ի նպատակն է վերացնել սնուցման մակարդակի վատթարացման և դրանից բխող մահացության հիմնական պատճառները՝ երեխաների և կանանց սննդային կարգավիճակը պաշտպանելու, ներառյալ միկրոէլեմենտների պարունակությունը ապահովելու, միջոցով, ինչպես նաև արդեն իսկ թերսնվածների բացահայտման և բուժման միջոցով, իրականացնելով հիմնավորված և ապացուցված միջամտություններ և համաձայն միջգերատեսչական համաձայնությունների և գոյություն ունեցող միջգերատեսչական ստանդարտների (օրինակ, «Sphere» ստանդարտները):

Ամբողջ աշխարհում մինչև հինգ տարեկան երեխաների մահերի ավելի քան մեկ երրորդը վերագրվում է թերսնուցմանը, որպես ուղղակի պատճառ կամ հիվանդության դեմ պայքարելու համար անհրաժեշտ օրգանիզմի ուժերի անկման հետևանքով: Սուր թերսնուցման հետևանքով մահացության ռիսկն ուղղակիորեն կապվում է թերսնուցման խստության մակարդակի հետ: Խիստ սուր թերսնված երեխայի մահի հավանականությունը ինը անգամ գերազանցում է լավ սնուցված երեխայինը: Կանանց և երեխաների մոտ միկրոէլեմենտների պակասի վնասակար հետևանքները ներառում են ծննդաբերության ժամանակ մայրական մահացության, թերաճ կամ մտավոր զարգացման խնդիրներ ունեցող երեխա ծնվելու և կրծկեր երեխայի առողջական ու զարգացման խնդիրների առաջացման առավել մեծ վտանգ: Նորածինների մոտ միկրոէլեմենտների պակասը մեծացնում է ինֆեկցիոն հիվանդությունների հետևանքով մահացության, ինչպես նաև ֆիզիկական և մտավոր զարգացման խանգարումների ռիսկը:

Միկրոէլեմենտներով հարստացված սննդի և սննդային հավելումների տրամադրումը արձագանքման գործողությունների կարևոր մաս է կազմում: Ի լրումն, քանի որ կրծքով սնուցված երեխաների փրկվելու հավանականությունը առնվազն վեց անգամ ավելի է, կրծքով սնուցման խթանումը, աջակցությունը և պաշտպանությունը հիմնարար նշանակություն ունեն արտակարգ իրավիճակներում նորածինների թերսնուցման և մահացության կանխարգելման գործում:

Ծրագրային գործողություններ

Պատրաստվածություն

- Հստակեցնել ՅՈՒՆԻՍԵՖ-ի և վերջինիս գործընկերների պատասխանատվության շրջանակները արտակարգ իրավիճակներում սնուցման ոլորտում, հզորացնել գոյություն ունեցող համակարգման մեխանիզմները, կամ, դրանց բացակայության պարագայում, ստեղծել՝ պետական իշխանությունների հետ համատեղ, ապահովելու, որ մարդասիրական արձագանքը լինի ժամանակին և համակարգված, և, որ այն համապատասխանի մարդասիրական գործողությունների սկզբունքներին ու համաձայնեցված ստանդարտներին ու հենանիշներին:
- Աջակցություն ցուցաբերել իրավիճակի բազմաոլորտային արագ գնահատման մեխանիզմի և ֆորմատի կիրարկմանը, որպեսզի այն ներառի սնուցման կարգավիճակի մասին առաջնահերթ տվյալներ:

- Ապահովել սնուցման կարգավիճակի արագ հարցումներ և իրավիճակի գնահատումներ անցկացնելու և հաշվետվություններ կազմելու համար անհրաժեշտ ուղեցույցների և կարողությունների առկայությունը, քարոզել, որպեսզի սնուցման կարգավիճակի գնահատումներից և ծրագրային մոնիտորինգներից բխող տվյալները ներառվեն աղետների արագ հայտնաբերման պետական համակարգում, ապահովել սնուցման կարգավիճակի մասին հիմնական նախնական տվյալների (ներառյալ մինչև աղետը թերսնուցման, հիվանդացության և սնուցման սովորույթների մասին տեղեկությունների) առկայությունը արձագանքի գործողությունները իրազեկելու նպատակով:
- Մշակել սուր թերսնուցման կառավարման ինտեգրացված ուղեցույցներ, գնահատել խիստ սուր թերսնուցման (ԽՍԹ/SAM) բուժման գոյություն ունեցող ծառայությունների ծածկույթը և սահմանել պահուստային մատակարարման և բաշխման պլան:
- Մշակել սնունդը միկրոէլեմենտներով հարստացնելու մասին ուղեցույց և համագործակցել այլ կառույցների հետ՝ արտակարգ իրավիճակներում սնունդը միկրոէլեմենտներով հարստացնելուն ուղղված գործողությունների իրականացման համար: Մշակել նման գործողությունների համար անհրաժեշտ բոլոր պարագաների մատակարարման և բաշխման պլան և մեխանիզմ (վիտամին .A, յոդացված աղ, տարբեր միկրոէլեմենտների հավելումներ), ներառյալ պահուստային ֆոնդեր և միկրոէլեմենտների հավելումների մատակարարների հետ կնքված նախնական համաձայնագրեր:
- Ուղեցույց տրամադրել և քարոզել, որ սննդային զամբյուղի մեջ ընդգրկվեն հավելյալ որակյալ սննդատեսակների համապատասխան քանակություններ, սահմանել արտակարգ իրավիճակներում նորածինների և երեխաների սնուցման հիմնական միջամտությունները, մշակել, թարգմանել և խթանել նորածինների և երեխաների սնուցման մասին նյութեր, և ներառել դրանք առողջապահության ոլորտի աշխատողների և խորհրդատուների ընթացիկ վերապատրաստման փաթեթում:
- Քարտեզագրել առկա համայնքային կարողությունները և հաղորդակցման միջոցները, դրանցից ընտրել ամենաարդյունավետները սնուցման մասին տեղեկատվություն տարածելու համար և մշակել սնուցման մասին համապատասխան ուղերձներ, որոնք կընդգրկվեն բազմաոլորտային հաղորդագրություններում:
- Մատակարարման և կազմակերպչական հարցերի առումով, մշակել մատակարարման պլաններ, բաշխման ռազմավարություններ և կնքել երկարաժամկետ պայմանագրեր, հնարավորության դեպքում՝ տեղերում:

Արձագանքում

- Հզորացնել և/կամ հիմնել սնուցման ոլորտի կլաստերային/ միջգերատեսչական համակարգման մեխանիզմ, որը կապահովի սնուցման ոլորտում իրավիճակի արագ գնահատում, մշակել սնուցման ոլորտի կլաստերային/ միջգերատեսչական գործողությունների պլան և համակարգել արձագանքման գործողությունների ներդաշնակ և պատշաճ իրականացումը՝ ուղղված իրավիճակի արագ գնահատման արդյունքում հայտնաբերված սնուցման ոլորտի հիմնական բացերի և խոցելի կողմերի վերացմանը, ներառյալ երեխաների և կանանց շրջանում:
- Արտակարգ իրավիճակի առաջին շաբաթվա ընթացքում նախաձեռնել իրավիճակի բազմաոլորտային արագ գնահատում, ներառյալ սնուցման ոլորտի առաջնահերթ տվյալների հավաքագրում, և առաջին վեց ամիսների ընթացքում՝ տնային տնտեսությունների մակարդակում սնուցման կարգավիճակի արագ գնահատում:
- Իրականացնել կրծքի կաթի փոխարինողների կամ կաթի փոշու չհասցեագրված նվիրատվությունների, դրանց բաշխման ու օգտագործման մոնիտորինգ, և ձեռնարկել համապատասխան միջոցներ:
- Պարենի համաշխարհային ծրագրի հետ համատեղ ապահովել երեխաների միջին սուր թերսնուցման և խոցելի խմբերի, ներառյալ հղիների և կրծքով կերակրող կանանց, հավելյալ սնուցման պատշաճ կառավարումը՝ համաձայն հայտնաբերված կարիքների:
- Աջակցել համայնքային և բուժհաստատությունների մակարդակում երեխաների համար ԽՍԹ բուժում իրականացնելու առկա կարողությունները և օժանդակել հավելյալ թերապևտիկ սնուցման մասով:
- Աջակցել և ստեղծել համայնքային մոբիլիզացիայի, ինչպես նաև սուր թերսնուցման հայտնաբերման և հասցեագրման համակարգեր:
- Ըստ կարիքի ապահովել 6-59 ամսական երեխաների բարձր դոզաներով վիտամին A-ի պատվաստումները, ինչպես նաև, առողջապահության ոլորտի աշխատողների հետ համագործակցելով, կազմակերպել ճիճվաթափություն բոլոր երեխաների (12-59 ամսական) շրջանում:
- Ապահովել, որ յոդացված աղը ներառվի արտակարգ իրավիճակներում տրամադրվող սննդային զամբյուղում: Այն դեպքում, եթե դա անելը անհնարին է և տնային տնտեսություններում դրա օգտագործումը 20 տոկոսից պակաս է կազմում, ապա անհրաժեշտ է ապահովել յոդացված ձեթի տրամադրումը 6-24 ամսական բոլոր երեխաներին և պտղաբեր տարիքի կանանց:

- Ապահովել 6-59 ամսական[6] երեխաներին տարբեր միկրոէլեմենտներով հարստացված պատրաստուկների տրամադրումը, բացառությամբ այն դեպքերի, երբ նման միկրոէլեմենտներով հարստացված սնունդ է տրամադրված, ինչպես նաև տարբեր միկրոէլեմենտների հավելումներ՝ հղի և կրծքով կերակրող կանանց շրջանում:
- Պաշտպանել, աջակցել և խրախուսել նորածինների վաղ և բացառապես կրծքով կերակրումը, ինչը ներառում է հղի և կրծքով կերակրող կանանց համար խորհրդատվության անվտանգ և ապահով կետերի հիմնումը, ապահովել անվտանգ և համապատասխան սնուցում կրծքով չկերակրվող 6 ամսականից[7] փոքր երեխաների համար, միևնույն ժամանակ նվազեցնելով արհեստական կերով սնուցման ռիսկերը, ապահովել համապատասխան խորհրդատվություն նորածինների հնարավոր սնուցման տարբերակների վերաբերյալ և աջակցել ՄԻԱՎ վարակակիր մայրերին, և, Պարենի համաշխարհային ծրագրի ու այլ գործընկերների հետ համատեղ՝ ապահովել անվտանգ, համարժեք և հասանելի հավելյալ սննդի առկայությունը երեխաների համար:
- Խորհրդակցել համայնքների հետ ծրագրային տեղեկատվության մշակման և իրականացման հարցում, ներառել սնուցման մասին համապատասխան և փորձով ապացուցված ուղերձներ ծրագրային տեղեկատվության բոլոր գործողություններում:
- Որոշել մատակարարման կարիքները և փոխանցել Մատակարարման և կազմակերպչական հարցերով զբաղվող բաժնին:

Արագ վերականգնում

- Ապահովել, որ սնուցման ոլորտում գործողությունների համակարգումն ու իրականացումը համաձայնեցվեն վերականգնման և երկարաժամկետ զարգացման ծրագրերի հետ, կիրառելով արդյունքների կայունություն ապահովող տեխնոլոգիաներ, ռազմավարություններ և մոտեցումներ՝ սնուցման ոլորտում պետական կարողությունների զարգացման նպատակով, ապահովել կապ գոյություն ունեցող պետական ռազմավարությունների և արագ վերականգնման կլաստերի/ցանցի հետ, և հիմնել հաշվետվականության մեխանիզմ՝ ուղղված որոշումների կայացման բարելավմանը:

---

[6] Ներկա կազմությամբ բազմակի միկրոէլեմենտներով հարստացված փոշիները չպիտի տրվեն երեխաներին մալարիայի էնդեմիկ տարածքներում՝ դրանց մեջ երկաթի պարունակության պատճառով: Այս համատեքստերի համար մշակվում են համապատասխան քաղաքականություններ:

[7] IFE Core Group, *Infant and Young Child Feeding in Emergencies: Operational Guidance for Emergency Relief Staff and Programme Managers*, Oxford, IFE Core Group, Oxford, February 2007, version 2.1.

- Ներդնել, հզորացնել և/կամ տեղայնացնել սնուցման մասին տվյալների տեղեկատվական համակարգ (որը կներառի թերսնուցման բուժման հարցերով զբաղվող ծրագրերի ընթացիկ գործունեության մոնիտորինգային տվյալներ, սնուցման վերաբերյալ հետազոտությունների տվյալներ), որը կիրազեկի պետական կամ տարածաշրջանային իրավիճակի վերլուծությունները և աղետների ռիսկի նվազեցման և կանխարգելման մասին որոշումները:
- Նախաձեռնել քննարկումներ պետական քաղաքականության, ռազմավարության և ուղեցույցների առնչությամբ՝ նպաստելու ԽՍԹ կայուն կառավարմանը, այն դեպքում եթե այդպիսին արդեն իսկ գոյություն չունի:
- Ապահովել, որ միկրոէլեմենտների հետ կապված գործողությունները հիմնվեն առկա պետական կարողությունների վրա, և նախաձեռնել քննարկումներ միկրոէլեմենտներ տրամադրելու երկարաժամկետ ռազմավարությունների վերաբերյալ, ինչպես նաև դրանցում հնարավորինս ներառել արտակարգ իրավիճակում կիրառված նոր մոտեցումները:
- Ապահովել, որ ՄՎՏԵՍ գործողությունները հիմնվում և աջակցում են նորածինների սնուցման վերաբերյալ խորհրդատվության և աջակցության գոյություն ունեցող պետական ցանցերին:
- Տեղայնացնել սնուցման ոլորտի գործողությունների վերաբերյալ տեղեկատվության ռազմավարությունները բուժհաստատությունների և արտագնա գործողությունների համար՝ ընթացիկ կիրառության նպատակով, և միավորել նման գործողությունները՝ դրանց ազդեցության ծածկույթը ընդլայնելու և փոփոխվող իրավիճակներին արձագանքելու նպատակով:
- Ձեռնարկել տեղական և պետական կարողությունների բացերի վերլուծություն և ապահովել, որ, ռիսկերի նվազեցման նպատակով, կարողությունների զարգացումը արագ վերականգնման և անցումային պլանների մաս է կազմում:

2.4 Առողջապահություն

Ռազմավարական արդյունք. առողջապահություն		
Աղջիկների, տղաների և կանանց մահացության մակարդակի աճը հումանիտար ճգնաժամի պայմաններում կանխարգելված է		
Հանձնառություններ		**Հենանիշներ**
Հանձնառություն 1. Առողջապահության ոլորտի միջգերատեսչական համակարգման մեխանիզմները (օրինակ, կլաստերային համակարգումը) ստանում են աջակցություն և հզորացվում են՝ միջգերատեսչական կարևոր հարցերի շուրջ այլ կլաստերային/ոլորտային համակարգման մեխանիզմների հետ համատեղ:	→	**Հենանիշ 1.** ՅՈՒՆԻՍԵՖ-ի և գործընկերների կողմից նախաձեռնած առողջապահական ծրագիրը նպաստում է միջգերատեսչական ռազմավարության և գործողությունների պլանի մշակմանը և ապահովում, որ գործողություններն իրականացվում են դրան համահունչ:
Հանձնառություն 2. Երեխաների ու կանանց համար հասանելի են կյանքի համար կարևոր բնակչության և համայնքային մակարդակներում իրականացվող միջամտությունները (օրինակ, քարոզարշավներն ու երեխայի առողջության պաշտպանությանը նվիրված օրերը):	→	**Հենանիշ 2.** Կարմրուկի պատվաստումների, վիտամին A և ճիճվաթափության դեղորայքի ապահովման ծածկույթը կազմում է տուժած բնակչության համապատասխան տարիքային խմբերի 95%: Մալարիայի էնդեմիկ շրջաններում աղետից տուժած տարածքում բնակվող բոլոր ընտանիքները ստանում են միջատասպան նյութով մշակված երկուական մահճակալի ցանց:
Հանձնառություն 3. Երեխաների, դեռահասների և կանանց համար հավասարապես հասանելի են զգալի և կայուն ազդեցություն ունեցող կանխարգելիչ և բուժական միջամտությունները:	→	**Հենանիշ 3.** 12-23 ամսական երեխաների 90%-ը ստացել է Իմունիզացիայի ազգային ծրագրով նախատեսված պատվաստումների ամբողջական փաթեթը: Աղետից տուժած տարածաշրջանի բուժհաստատություններում չպետք է թույլ տալ հակաբիոտիկների (որպես ընդհանուր առողջապահական ծառայությունների ցուցանիշ), օքսիտոզի (որպես հիմնական անհետաձգելի մանկաբարձական և նորածնային ծառայությունների ցուցանիշ) երկաթի/ֆոլաթթվի (որպես նախածննդյան խնամքի ցուցանիշ) և հակառետրովիրուսային դեղամիջոցների (մորից մանկան ՄԻԱՎ-ի փոխանցման կանխարգելման ցուցանիշ) պահուստների սպառում: Առնվազն մեկ անհետաձգելի մանկաբարձական ծառայություններ տրամադրող բուժհաստատություն՝ 100,000 բնակչի հաշվով:
Հանձնառություն 4. Կանանց և երեխաների համար հասանելի են առողջապահական և սնուցման հետ կապված վարքագծային փոփոխությանը միտված տեղեկատվական միջոցառումները:	→	**Հենանիշ 4.** Ամբողջ տուժած բնակչությունը տարբեր աղբյուրներից ստանում է առողջության մասին ուսուցողական/խրախուսական ուղերձներ:

Հանձնառություն 5. Կանանց և երեխաների համար հասանելի են տնային տնտեսության հիմնական պարագաները:	→	**Հենանիշ 5.** Տուժած բնակչության 90%-ի համար հասանելի են տնային տնտեսության հիմնական պարագաները:

Տեխնիկական հիմնավորում/ապացույցներ. Առողջապահությանն առնչվող ԵԱՀ-ները ուղղված են մայրերի, նորածինների և երեխաների մահացության հիմնական պատճառների վերացմանը՝ փորձով ապացուցված արդյունավետ միջամտությունների, միջգործակալական համաձայնությունների և առկա միջգերատեսչական ստանդարտների (օրինակ, «Sphere» ստանդարտներ) միջոցով: Անմիջապես հետաղետային փուլում ուղղակի պատճառները, ինչպիսիք են վնասվածքները կամ բռնությունը, կարող են մեծ թվով մահերի առիթ հանդիսանալ: Տևական արտակարգ իրավիճակներում մահերի մեծ մասի պատճառները վերագրվում են համայնքում տիրող առողջապահական ընդհանուր պայմաններին, ինչպիսիք են օրինակ, թերսնուցումը, թոքաբորբը, փորլուծությունը, կարմրուկը, մալարիան (մալարիայի էնդեմիկ տարածքներում) և նորածնային շրջանին հատուկ պատճառները: Սրանով պայմանավորված՝ ծրագրային փաստացի փաթեթը տարբեր է:

ՅՈՒՆԻՍԵՖ-ը հանձն է առել աջակցել մայրերի, նորածինների և վաղ մանկության շրջանի առողջապահական գործողությունները, ելնելով այն նկատառումից, որ մայրական առողջությունը անփոխարինելի դեր ունի նորածինների և երեխաների առողջության ապահովման գործում: ՅՈՒՆԻՍԵՖ-ը նաև աջակցում է տնային տնտեսությունների, համայնքի և բուժհաստատությունների կողմից իրականացվող առողջապահական գործողություններին, առավել շեշտադրելով համայնքային առողջապահական մոտեցումները:

Ծրագրային գործողություններ

Պատրաստվածություն

- Հստակեցնել արտակարգ իրավիճակներում առողջապահության ոլորտում ՅՈՒՆԻՍԵՖ-ի և վերջինիս գործընկերների պատասխանատվության շրջանակները:
- Հզորացնել առկա համակարգման մեխանիզմները կամ, դրանց բացակայության դեպքում, ստեղծել դրանք՝ պետական իշխանությունների և Առողջապահության համաշխարհային կազմակերպության հետ համատեղ, արտակարգ իրավիճակներում արձագանքման գործողությունների ժամանակին լինելն ու համակարգվածությունը ապահովելու և մարդասիրական գործողությունների սկզբունքների ու համաձայնեցված ստանդարտներին ու հենանիշներին համապատասխանությունը ապահովելու նպատակով:
- Աջակցություն ցուցաբերել իրավիճակի բազմաոլորտային արագ գնահատման մեխանիզմի և ֆորմատի գործարկմանը (ներառյալ առողջապահությանը վերաբերող առաջնահերթ տվյալների հավաքագրմանը):

- Ապահովել, որ արտակարգ իրավիճակներում պատրաստվածության ու արձագանքման պլանավորումը ներառի հստակ ռազմավարություններ, պահանջվող ռեսուրսների պլանավորում, մատակարարման և վերամատակարարման պլանավորում և դերերի ու պատասխանատվու-թյան շրջանակի հստակ բաժանում հիմնական գործընկերների միջև:
- Ստեղծել և վարել առողջապահական հիմնական պարագաների, ներառյալ պատվաստանյութերի, սառը շղթայի և հիմնական դեղորայքի, գույքագրում:
- Նշանակել արտակարգ իրավիճակներում առողջապահական ռազմավարության և արագ վերականգնման ծրագրերի փորձ ունեցող ավագ տեխնիկական մասնագետ՝ կարողությունների հզորացման նպատակով:
- Ապահովել առողջապահության ոլորտի աշխատողների, ներառյալ համայնքային գործակալների, պարբերական վերապատրաստումը արտակարգ իրավիճակների պատրաստվածության և արձագանքման ոլորտում:
- Ապահովել, որ մինչ արտակարգ իրավիճակն իրականացվող մայրերի, նորածինների և երեխաների առողջապահական միջամտությունների մասին տվյալները թարմացված լինեն, և, անհրաժեշտության դեպքում, հզորացնել և/կամ ստեղծել մոնիտորինգի, արդյունքների գնահատման և տվյալների հավաքագրման համակարգեր:
- Մշակել առողջապահական թեմաներով հանրային ուսուցման և խրախուսման համապատասխան ուղերձներ տարածաշրջանային մակարդակում համայնքների ներգրավմամբ, և ապահովել երկրում վարքագծային փոփոխություններ խթանող տեղեկատվական գործողություններ իրականացնող գործընկերների առկայությունը:
- Մատակարարման և կազմակերպչական հարցերով զբաղվող բաժինների հետ համատեղ մշակել մատակարարման և բաշխման ռազմավարություններ՝ հիմնված պարագաների բաշխում իրականացնելու տեղական կարողությունների վրա: Ձեռք բերել երկարաժամկետ համաձայնագրեր հիմնական պարագաների մատակարարման վերաբերյալ, հնարավորինս տեղերում:
- Զարգացնել բոլոր մակարդակներում պետական շահագրգիռ կողմերի արտակարգ իրավիճակներին արձագանքման կարողությունները:

Արձագանքում

- Աջակցել առողջապահության ոլորտի կլաստերային/միջգերատեսչական համակարգման մեխանիզմի հզորացմանը (որպես կլաստերային

գործընկեր կամ հիմնական դերակատար, ըստ անհրաժեշտության) առողջապահության ոլորտում իրավիճակի արագ գնահատումն ու մայրերի, նորածինների և երեխաների առողջապահական կարիքներին արագ արձագանք ապահովելու նպատակով:

- Ապահովել համատեքստի կարիքներից բխող անհրաժեշտ ծառայությունների փաթեթի արագ տրամադրումը: Սովորաբար, նման փաթեթը ներառում է կարմրուկի դեմ պատվաստում և վիտամին A-ի, չմաշվող միջատասպան միջոցներով պատված ցանցերի և ճիճվաթափող դեղորայքի տրամադրում, այնուամենայնիվ փաստացի փաթեթի պարունակությունը և տրամադրման մեխանիզմը մեծապես կախված են համատեքստի պահանջներից:
- Ապահովել արտակարգ իրավիճակի հետևանքով դադարեցված կանանց և երեխաների հիմնական առողջապահական ծառայությունների վերականգնումը, ներառյալ հիմնական դեղորայքի, ախտորոշման և պարագաների տրամադրումը: Առաջնահերթ հիմնական առողջապահական ծառայությունները ներառում են հետևյալը.
  - ✓ Մայրերի, նորածինների և երեխաների առողջության վրա մեծ ազդեցություն ունեցող վիճակների բուժում, ինչպիսիք են. թոքաբորբը, փորլուծությունը և մալարիան (առկայության դեպքում):
  - ✓ Հիմնական ծառայություններ, ինչպիսին են, օրինակ, մայրական առող-ջապահության ծառայությունները, Պատվաստման ընդլայնված ծրագիրը (EPI) և ՄԻԱՎ կանխարգելման ու բուժման ծառայությունները:
  - ✓ Կլինիկական և հոգեբանական ծառայություններ սեռական կամ մանկական բռնության զոհերի համար:
- Ապահովել առողջապահական թեմաներով հանրային ուսուցման վարքագծային փոփոխությանը միտված ուղերձների հղումը աղետից տուժած բնակչությանը, հատկապես շեշտադրելով առկա առողջապահական ծառայությունները, հիվանդությունների տնային բուժումը, կյանքին վտանգ սպառնացող հիմնական վիճակների նշանները (կախված համատեքստից) և առողջության խրախուսման (օրինակ, կրծքով սնուցում, առողջ ապրելակերպ, անվտանգ մայրություն, ձեռքերի լվացում, հիգիենա և մաքրություն) հասցեագրումը:
- Ապահովել տեղական մշակույթին և սոցիալ-տնտեսական նորմերին համապատասխանող տնային տնտեսությունների հիմնական պարա-գաների մատակարարում և բաշխում աղետից տուժած բնակչությանը:
- Որոշել մատակարարման կարիքները և փոխանցել Մատակարարման և կազմակերպչական հարցերով զբաղվող բաժնին:

Արագ վերականգնում

- Ապահովել, որ առողջապահական ոլորտի գործողությունների համակարգումն ու իրականացումը համահունչ լինի վերականգնման և երկարաժամկետ զարգացման ծրագրերի հետ, աջակցելով պետական շահագրգիռ կողմերին, Արագ վերականգնման կլաստերին/ցանցին անցումային ռազմավարությունների և տեղական ու պետական կարողությունների զարգացման պլանների մշակման հարցում, ինչպես նաև զարգացնել պետության և քաղաքացիական հասարակության շրջանում ռիսկերի նվազեցման կարողությունները:
- Ապահովել, որ արագ վերականգնման և անցումային պլանները անդրադառնան մայրերի, նորածինների և երեխաների առողջապահության հիմնական կարիքների բավարարմանը: Չափազանց կարևոր է, որ այդ պլանները համաձայնեցված լինեն առողջապահության ոլորտում գոյություն ունեցող պետական ռազմավարությունների հետ (օրինակ, առողջապահության համակարգի հզորացման և առողջապահության ոլորտի բարեփոխումների պլանները):
- Տրամադրել անհրաժեշտ օժանդակություն հիմնական ծառայությունների վերականգնման գործում, օրինակ, EPI ծառայությունների վերականգնման համար անհրաժեշտ սառը շղթա:
- Նախաձեռնել քննարկումներ՝ ուղղված արտակարգ իրավիճակների արձագանքման պլատֆորմը որպես մայրերի, նորածինների և երեխաների առողջապահական հիմնական միջամտությունների հետագա կայուն ընդլայնման հնարավորություն օգտագործելուն, ինչը թույլ կտա արտակարգ իրավիճակի հետևանքով ստեղծված հնարավորությունները օգտագործել առկա ռազմավարությունների և պրոտոկոլների վերանայման համար, «առավել լավը կառուցելու» նպատակով:
- Ձեռնարկել առողջապահության ոլորտում տեղական և պետական կարողությունների բացերի վերլուծություն, և ապահովել, որ կարողությունների զարգացումը արագ վերականգնման և անցումային պլանների մաս կազմի՝ միտված աղետների ռիսկերի նվազեցմանը:

2.5 Ջուր, սանիտացիա և հիգիենա (ՋՍՀ/WASH)

Ռազմավարական արդյունք. ՋՍՀ		
Աղջիկների, տղաների և կանանց համար անվտանգ և ապահով կերպով հասանելի են բավարար քանակության մաքուր ջուրը, սանիտացիայի և հիգիենայի պահպանման հարմարությունները		
Հանձնառություններ		**Հենանիշներ**
Հանձնառություն 1. ՋՍՀ կլաստերային/ միջգերատեսչական համակարգումն արդյունավետորեն իրականացվում է՝ հիմնական միջգերատեսչական հարցերի վերաբերյալ համագործակցելով այլ կլաստերային/ միջգերատեսչական համակարգման մեխանիզմների հետ:	→	**Հենանիշ 1.** Համակարգման մեխանիզմը բոլոր գործընկերներին ուղեցույց է տրամադրում ընդհանուր մոտեցումների և ստանդարտների վերաբերյալ, ապահովում, որ հայտնաբերվել են ՋՍՀ-ի հետ կապված բոլոր կարևոր բացերն ու խոցելի կողմերը, և տրամադրում տեղեկություններ այն մասին, թե ով ինչ է անում, որտեղ, երբ և ինչպես՝ առանց կրկնողության բոլոր բացերի վերացման նպատակով:
Հանձնառություն 2. Երեխաների և կանանց համար հասանելի է բավարար որակի և քանակի ջուր՝ խմելու, կերակուր պատրաստելու և անձնական հիգիենան ապահովելու համար:	→	**Հենանիշ 2.** Երեխաների և կանանց համար հասանելի է օրական առնվազն 7.5–15 լիտր մաքուր խմելաջուր:
Հանձնառություն 3. Երեխաների և կանանց համար հասանելի են տեղական մշակույթում ընդունելի, անվտանգ, մաքուր, հարմարավետ և գենդերային տեսանկյունից համապատասխան զուգարաններ և լվացվելու հարմարություններ:	→	**Հենանիշ 3.** Ապահովված է հիգիենայի պահանջներին բավարարող մեկ զուգարան կամ արտաքնոց առավելագույնը 20 հոգու հաշվով, օգտվողները արտաթորելուց հետո օճառով կամ դրան համարժեք նյութով (օրինակ, մոխիր) ձեռքերը լվանալու հնարավորություն ունեն:
Հանձնառություն 4. Երեխաներն ու կանայք ստանում են ՋՍՀ-ի վերաբերյալ բավարար տեղեկատվություն՝ ուղղված մանկական հիվանդությունների, մասնավորապես փորլուծության, կանխարգելմանը:	→	**Հենանիշ 4.** Կանանց և երեխաների խնամակալների 70%-ին տրամադրվել է երեխայի խնամքի և սնուցման ապահով և մաքուր գործելակերպի հետ կապված հիգիենայի կանոնների վերաբերյալ ուսուցում և տեղեկատվություն:
Հանձնառություն 5. Երեխաների համար հասանելի են մաքուր ջուրը, սանիտացիայի և հիգիենայի պահպանման հարմարությունները իրենց կրթօջախներում և երեխաների համար նախատեսված վայրերում:	→	**Հենանիշ 5.** Կրթօջախներում և երեխաների համար նախատեսված վայրերում ապահովված են մեկ երեխայի հաշվով օրեկան 1-2 լիտր խմելու ջուր (կախված կլիմայական և անհատական ֆիզիոլոգիական առանձնահատկություններից), հիսուն երեխայի հաշվով մեկ հիգիենայի պահանջներին բավարարող զուգարան կամ արտաքնոց դպրոցում, օգտվողները հնարավորություն ունեն արտաթորելուց հետո օճառով կամ դրա համարժեք նյութով ձեռքերը լվանալու, երեխաներին, խնամակալներին և ուսուցիչներին տրամադրվել է հիգիենայի կանոնների վերաբերյալ համապատասխան ուսուցում և տեղեկատվություն:

Տեխնիկական հիմնավորում/ ապացույցներ. Բալանսավորված և ինտեգրված ՋՍՀ մոտեցումը կարևոր դեր ունի մահացության, հատկապես արտակարգ իրավիճակներում մանկական մահացության, կանխարգելման և նվազեցման գործում: Վերջին ժամանակների փորձը ցույց է տալիս, որ փորլուծությունը հումանիտար ճգնաժամի պայմաններում երեխաների մահացության և հիվանդությունների հիմնական պատճառներից մեկն է: Փորլուծության յուրաքանչյուր էպիզոդ դանդաղեցնում է երեխայի աճն ու զարգացումը: Փորլուծության դեպքերի համարյա թե 90 տոկոսը հնարավոր է կանխել մաքուր խմելաջրի, հիմնական սանիտացիայի միջոցների և հիգիենայի կանոնների պատշաճ պահպանման միջոցով: Փորլուծության դեպքերի թիվը հնարավոր է նվազեցնել 25 տոկոսով՝ խմելու ջրի որակի բարելավման, 32 տոկոսով՝ սանիտացիայի պայմանների բարելավման, 44 տոկոսով՝ օճառով ձեռքերը լվանալու, և 39 տոկոսով՝ տնային տնտեսություններում օգտագործվող ջրի մաքրման արդյունքում: Ջրի որակի բարելավմանն ուղղված միջամտությունները կարող են կրճատել փորլուծության դեպքերի հաճախականությունը մոտավորապես 70 և ավելի տոկոսով:

Ծրագրային գործողություններ

Պատրաստվածություն

- Հստակեցնել ՅՈՒՆԻՍԵՖ-ի և վերջինիս գործընկերների պատասխանատվության շրջանակները արտակարգ իրավիճակներում ՋՍՀ ոլորտի կարգավորման հարցում:
- Հզորացնել համակարգման գոյություն ունեցող մեխանիզմները, կամ, վերջինիս բացակայության դեպքում, ստեղծել այն՝ համագործակցելով պետական իշխանությունների հետ, ապահովելու մարդասիրական գործողությունների ժամանակին լինելն ու համակարգվածությունը, ինչպես նաև դրա համապատասխանությունը մարդասիրական գործողության սկզբունքներին և համաձայնեցված ստանդարտներին ու հենանիշներին:
- Հիմնել իրավիճակի բազմաոլորտային արագ գնահատման մեխանիզմ և ֆորմատ, որոնք կներառեն ՋՍՀ-ի վերաբերյալ առաջնահերթ տվյալների հավաքագրում:
- Մշակել պահուստային պլան, որը կներառի բյուջե և մատակարարման կարիքների ցանկ, և, հնարավորության դեպքում, նախատեսել գենդերային տարբերակումներով սանիտացիայի և հիգիենայի պարագաներ, ջրամատակարարում, մաքրման տեխնոլոգիաներ, քիմիկատներ և գործիքներ:
- Կնքել երկարաժամկետ համաձայնագրեր նախատեսված ՋՍՀ պարագաների մատակարարման համար, գնահատել տեղական շուկայի ջրային պաշարների փոխադրման հնարավոր կարողությունները և

ապահովել ջուր մատակարարող գործընկերների առկայություն, ինչպես նաև ձեռք բերել համաձայնություն մեթոդների և ստանդարտների մասին:

- Ընտրել սանիտացիայի և հիգիենայի մասին հանրային ուսուցման և վարքագծային փոփոխությանն ուղղված ծրագրերի իրականացման փորձ ունեցող հիմնական ռեսուրս հանդիսացող մասնագետների և/կամ հաստատություններ, որոնք աղետի դեպքում կտեղակայվեն արտակարգ իրավիճակում պլանավորման և արձագանքման կազմակերպման առաքելությամբ, ինչպես նաև հավաքագրել սանիտացիայի և հիգիենայի մասին հանրային ուսուցման մասին տեղեկություններ:
- Ապահովել, որ պահուստային պլան կազմվի նաև երեխաների կրթօջախների համար (օրինակ, դպրոցների), դրանց համար նախատեսվեն ՋՍՀ հիմնական պարագաներ և գործիքներ, ինչպես նաև բարձրացնել տեղական և պետական իշխանությունների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների, ավանդական և կրոնական լիդերների և այլոց տեղեկացվածությունը մարդասիրական գործողություններում ՋՍՀ ԵԱՀ-ի մասին:

Արձագանքում

- Հզորացնել և/կամ հիմնել ՋՍՀ ոլորտի կլաստերային/ միջգերատեսչական համակարգման մեխանիզմ, մշակել ՋՍՀ կլաստերային/ միջգերատեսչական գործողությունների ծրագիր և համակարգել դրա իրականացումը:
- Ապահովել, որ երեխաների և կանանց իրավունքն ու կարիքները մաքուր ջրի, սանիտացիայի և հիգիենայի առնչությամբ ներառվել են ՋՍՀ արձագանքման պլանում, բյուջեում և կից փաստաթղթերում, և ապահովել, որ երեխաներին ու կանանց տրվի առաջնահերթություն մաքուր ջրով համապատասխան որակի ու քանակի ապահովման գործում:
- Ապահովել, որ երեխաների ՋՍՀ կարիքները իրենց կրթօջախներում և երեխաների համար նախատեսված վայրերում ներառվեն ՋՍՀ ոլորտի արձագանքման պլանում:
- Ապահովել, որ մարդասիրական արձագանքման ՋՍՀ գործողությունները նպաստեն երեխաների կարիքների բավարարմանն ու իրավունքների պաշտպանությանը, և, որ ջուրը, զուգարանները, լվացարանները և օճառը մշտապես հասանելի լինեն երեխաների և կանանց համար:
- Ապահովել, որ հումանիտար արձագանքման ՋՍՀ գործողությունները բավարարեն երեխաների իրավունքներն ու կարիքները իրենց կրթօջախներում զուգարանների առկայության առումով, որ օճառը մշտապես մատչելի լինի ձեռքերը լվանալու համար, և, որ այդ

հարմարությունները հարմարեցվեն երեխաների ու հաշմանդամների համար, լինեն փակ, ապահով, տեղական մշակույթին համապատասխան, ինչպես նաև պատշաճ կերպով բաժանված լինեն տարբեր սեռերի համար:

- Ապահովել, որ երեխաները, կանայք և խնամատար անձիք ստանան հիգիենայի կանոնների մասին հանրային ուսուցման ու հիգիենայի պաշտպանության սովորույթների մասին տեղական մշակույթին համապատասխանող տեղեկատվություն, և, որ լինեն բավարար թվով վերապատրաստված և համապատասխան ուսուցողական նյութեր ունեցող հիգիենայի մասին հանրային ուսուցում իրականացնողներ:

Արագ վերականգնում

- Ապահովել, որ ՋՍՀ գործողությունների համակարգումն ու իրականացումը համապատասխանեն վերականգնման և երկարաժամկետ զարգացման փուլերին և արագ վերականգնման կլաստերի/ ցանցի գործողություններին, և, որ դրանք ուղղվեն ռիսկերի նվազեցմանը:
- Ապահովել, որ ջրամատակարարման տեխնոլոգիաներն ու մոտեցումները համատեղելի լինեն պետական ստանդարտների ու երկարաժամկետ կայուն զարգացման սկզբունքների հետ, այդպիսով հասցեագրելով ռիսկերի նվազեցումը, և, որ մշակվի կարողությունների զարգացման պլան՝ տեղական մակարդակում ջրամատակարարման գործառնություններն ու ընթացիկ սպասարկումը ապահովելու համար:
- Ապահովել, որ սանիտացիայի և հիգիենայի պաշտպանության մոտեցումներն ու տեխնոլոգիաները համապատասխանեն պետական ստանդարտներին և համատեղելի լինեն երկարաժամկետ կայուն զարգացման սկզբունքների հետ՝ հասցեագրելով ռիսկերի նվազեցումը:
- Ապահովել, որ առկա է հիգիենայի ապահովման հարմարությունների օգտագործման և սպասարկման, դրանց հետ կապված հիվանդությունների միտումների պարբերական հսկման մեխանիզմ:
- Ապահովել, որ հիգիենայի կանոնների խրախուսման ռազմավարությունները համատեղելի լինեն պետական մոտեցումների և երկարաժամկետ կայուն զարգացման սկզբունքների հետ, հասցեագրեն ռիսկերի նվազեցումը, որ մշակված լինի կարողությունների զարգացման պլան՝ ապահովելու հիգիենայի կանոնների խրախուսման ջանքերի շարունակականությունը, և, որ գործի հսկման մեխանիզմ:
- Ապահովել, որ երեխաների կրթօջախներում իրականացվող ՋՍՀ ռազմավարություններն ու օգտագործվող տեխնոլոգիաները համատեղելի լինեն պետական ռազմավարությունների երկարաժամկետ կայուն զարգացման սկզբունքների հետ, հասցեագրեն ռիսկերի նվազեցումը, և,

որ մշակված լինի կարողությունների զարգացման պլան՝ տեղական մակարդակում երեխաների կրթօջախներում ՋՍՀ հարմարությունների գործառնություններն ու ընթացիկ սպասարկումն ապահովելու նպատակով:

- Ապահովել, որ ՋՍՀ միջամտությունները հիմնված լինեն աղետի ռիսկերի ճշգրիտ գնահատման և վերլուծության վրա:
- Ձեռնարկել տեղական և պետական ՋՍՀ ոլորտի կարողությունների բացերի վերլուծություն, և ապահովել, որ այդ կարողությունների հզորացման պլանները արագ վերականգնման և անցումային պլանների մաս կազմեն՝ ռիսկերի նվազեցման հատուկ շեշտադրումով:

2.6 Երեխաների պաշտպանություն

Ռազմավարական արդյունք. Երեխաների պաշտպանություն		
Աղջիկների և տղաների բռնությունից, չարաշահումներից և շահագործումից պաշտպանված լինելու իրավունքն իրացվում և խրախուսվում է		
Հանձնառություններ		**Հենանիշներ**
Հանձնառություն 1. Հիմնված է երեխաների պաշտպանության և գենդերային բռնության ոլորտների կլաստերային համագործակցության արդյունավետ կառավարում՝ հիմնական միջոլորտային հարցերի վերաբերյալ այլ կլաստերային/ոլորտային համակարգման մեխանիզմների հետ համագործակցությամբ: Աջակցություն է ցուցաբերվում մտավոր և հոգեկան առողջապահության համակարգման մեխանիզմին:	→	**Հենանիշ 1.** Երեխաների պաշտպանության և գենդերային բռնության հարցերով զբաղվող համակարգման մեխանիզմները բոլոր գործընկերներին ուղեցույց է տրամադրում ընդհանուր ստանդարտների, ռազմավարությունների և մոտեցումների վերաբերյալ, ապահովում, որ հայտնաբերվել են բոլոր երեխաների պաշտպանության և գենդերային բռնության ոլորտների կարևոր բացերն ու խոցելի կողմերը, և տրամադրում տեղեկատվություն դերերի, պարտականությունների և հաշվետվականության վերաբերյալ՝ առանց կրկնողության բոլոր բացերի վերացման նպատակով: Ստեղծված են ՀԱՀՍԱ համակարգման մեխանիզմներ, որոնք կապված են առնչվող այլ կլաստերների հետ:
Հանձնառություն 2. Տեղում է կոպիտ խախտումների և պաշտպանության այլ ասպեկտների մոնիտորինգի և հաշվետվականության մեխանիզմ, որը պարբերաբար ուշադրություն է հրավիրում արձագանքման (ներառյալ շահերի պաշտպանության միջոցով) կարիք ունեցող դեպքերի վրա:	→	**Հենանիշ 2.** Երեխաների և կանանց նկատմամբ կոպիտ խախտումների և պաշտպանության ոլորտի այլ կարևոր հարցերի վերաբերյալ պարբերական զեկույցները առկա են և կիրառվում են:
Հանձնառություն 3. Աղետից տուժած տարածքներում հզորացված են երեխաների պաշտպանության հիմնական մեխանիզմները:	→	**Հենանիշ 3.** Մշակված է երեխաների պաշտպանության ոլորտի հիմնական ռիսկերի կանխարգելման և արձագանքման պլան, որը հիմնված է գոյություն ունեցող համակարգերի վրա, հիմնված են ապահով տարածքներ ամենախոցելի երեխաների համար:
Հանձնառություն 4. Կանխարգելված և լուծված է երեխաների իրենց ընտանիքներից հեռացման հարցը, խրախուսվում է ընտանեկան խնամքը:	→	**Հենանիշ 4.** Հայտնաբերված են առանց ընտանեկան և մեծահասակի խնամքի ապրող երեխաները, որոնք տեղավորված են ընտանեկան խնամքի կամ համապատասխան այլընտրանք առաջարկող հաստատություններում:
Հանձնառություն 5. Կանխարգելված և լուծված են երեխաների և կանանց նկատմամբ բռնության, շահագործման և վիրավորանքի (ներառյալ գենդերային բռնության) դեպքերը:	→	**Հենանիշ 5.** Աղետից տուժած համայնքները մոբիլիզացված են կանխարգելելու և լուծելու երեխաների և կանանց նկատմամբ իրականացվող բռնության, շահագործման և վիրավորանքի դեպքերը, գենդերային բռնության զոհերի աջակցության գոյություն ունեցող համակարգերը բարելավված են:

Հանձնառություն 6. Երեխաներին և նրանց խնամակալներին տրամադրվում է սոցիալ-հոգեբանական աջակցություն:	→	**Հենանիշ 6.** Երեխաների պաշտպանության բոլոր ծրագրերն ներառում են սոցիալ-հոգեբանական աջակցություն՝ համաձայն ԱԻԿՄՑ ՀԱՀՍԱ ուղեցույցների:
Հանձնառություն 7. Կոնֆլիկտի արդյունքում տուժած երեխաների շրջանում կանխարգելված և լուծված են երեխաների հավաքագրման և շահագործման, ինչպես նաև անօրեն և կամայական կալանքի հարցերը:	→	**Հենանիշ 7.** Երեխաների զորագրման դեպքերի կանխարգելման և արձագանքման համար մշակվել և իրականացվում է միջգերատեսչական պլան, իրականացվում է կոնֆլիկտային գոտու երեխաների անօրեն և կամայական կալանավորման դեմ քարոզարշավ:
Հանձնառություն 8. Կանխարգելված և վերացված է ականապատման և այլ արգելված զենքի օգտագործումը պետության և ոչ-պետական դերակատարների կողմից:	→	**Հենանիշ 8.** Աղետից տուժած տարածքներում երեխաների և համայնքների համար հասանելի է պայթուցիկ նյութերի ռիսկի մասին ուսուցումը, նրանք պաշտպանված են ականապատումներից և այլ պայթուցիկ զինամթերքից:

Տեխնիկական հիմնավորում/ապացույցներ. Փորձը ցույց է տալիս, որ արտակարգ իրավիճակները մեծացնում են պաշտպանության ոլորտին հատուկ ռիսկերը, ինչպես նաև ստեղծում են նոր ռիսկեր: Երեխաների նկատմամբ իրագործված հատուկ խախտումների, ինչպիսիք են, օրինակ, երեխաների իրենց ընտանիքներից հեռացումը, ներքաշումը զինված ուժեր կամ խմբեր, գենդերային բռնության ենթարկելը, ականների և այլ չվնասազերծված պայթուցիկների օգտագործումը, սոցիալ-հոգեբանական հյուծումը, կանխարգելումն ու ծրագրային արձագանքումը ուղղորդվում են այդ տարածքներում միջգերատեսչական ուղեցույցների մշակմամբ և իրականացմամբ: Աստիճանաբար աճում է բռնության, վիրավորանքի և շահագործման տարբեր ձևերի կանխարգելման և արձագանքման երեխաների պաշտպանության մեխանիզմների հզորացման կարիքի գիտակցությունը (տե՛ս ՅՈՒՆԻՍԵՖ-ի Երեխաների պաշտպանության ռազմավարությունը, 20 մայիսի, 2008 թ.):

Ծրագրային գործողություններ

Պատրաստվածություն

- Հստակեցնել արտակարգ իրավիճակներում երեխաների պաշտպանության ոլորտում ՅՈՒՆԻՍԵՖ-ի և վերջինիս գործընկերների պատասխանատվության շրջանակները:
- Հզորացնել գոյություն ունեցող համակարգման մեխանիզմները, ապահովելու, որ արձագանքման գործողությունները լինեն ժամանակային առումով չուշացած և համակարգված, և որ դրանք համապատասխանեն մարդասիրական գործողությունների սկզբունքներին և ստանդարտներին: Համակարգման մեխանիզմի բացակայության դեպքում, ստեղծել այն՝ համագործակցելով պետական իշխանությունների հետ: Հստակեցնել գենդերային բռնության, մտավոր առողջության և սոցիալ-հոգեբանական աջակցության համակարգման մեխանիզմները:

- Իշխանությունների հետ համատեղ մշակել միջգերատեսչական պատրաստվածության պլան՝ առկա ռիսկերի, կարողությունների և ռեսուրսների հիման վրա: Մշակել երեխաների պաշտպանության, գենդերային բռնության և ՀԱՀՍԱ-ի երեխաների պաշտպանությանն առնչվող բաժինների համար կատարողականի հենանիշեր:
- Վերապատրաստել աշխատակիցներին և գործընկերներին արտակարգ իրավիճակներում երեխաների պաշտպանության վերաբերյալ, օգտագործելով նյութեր քաղաքականության, գործիքների և ԵԱՀ-ի վերաբերյալ:
- Համաձայնեցնել գրանցման, հսկողության և ընտանեկան վերամիավորման համաշխարհային միջգերատեսչական ձևաթղթերի օգտագործումը, համայնքների և հիմնական դերակատարների հետ համատեղ մշակել ուղերձներ՝ ուղղված ընտանիքի բաժանության կանխարգելմանը և երեխաներին հաստատություններ տեղավորելու ռիսկի նվազեցմանը, և մշակել ու խրախուսել ընտանիքների հետքագրման, վերամիավորման և այլընտրանքային օժանդակության փաթեթների կիրառումը:
- Գտնել և տարածել համապատասխան օրենսդրական և նորմատիվ շրջանակներ, արձագանքման պրոտոկոլներ, ուղեգրման մեխանիզմներ և սոցիալական դիրքորոշումների ու արժեքների մասին տվյալներ:
- Գտնել բռնության, շահագործման կամ վիրավորանքի, ներառյալ գենդերային բռնության, դեպքերի լուծման փորձ ունեցող շահագրգիռ կողմեր, ծառայություններ և գործընկերներ, և զարգացնել գործընկերների տուժածներին ու զոհերին բազմաոլորտային արձագանքման ծառայություններ (օրինակ, առողջապահական, սոցիալ-հոգեբանական, անվտանգության ապահովման և իրավաբանական ծառայություններ) մատուցելու կարողությունները:
- Փնտրել սոցիալ-հոգեբանական աջակցությունը երեխաների պաշտպանության ոլորտի ծրագրերում ինտեգրելու հնարավորություններ՝ համաձայն ԱԻԿՄՑ ՀԱՀՍԱ ուղեցույցի:
- Գտնել և տարածել զինված ուժեր ու խմբեր ներքաշելու նվազագույն թույլատրված տարիքն՝ ըստ միջազգային և պետական ստանդարտների, և, անհրաժեշտության դեպքում, քարոզել, որ միջազգային հանձնառությունները դառնան պետական օրենսդրության մաս:
- Հայտնաբերել ու վերացնել երեխաներին զինված ուժեր ներքաշման, ինչպես նաև անօրեն ու կամայական կալանքի հանգեցնող ռիսկային գործոնները, զինված ուժերի համար մշակել ցուցակ և իրազեկել

կալանավայրերի աշխատակազմերին՝ երեխաների իրավունքների ոտնահարման դեպքերը կանխելու նպատակով:

- Քարոզել ընդդեմ ականների և այլ զինամթերքի օգտագործման, պահեստավորման, արտադրության ու փոխանցման, և իրականացնել կարողությունների քարտեզագրում: Հզորացնել հսկողության ու ռիսկերի մասին հանրային ուսուցում իրականացնելու կարողությունները:
- Կնքել երկարաժամկետ համաձայնագրեր հատուկ պարագաների մատակարարման մասին, և նախատեսել մատակարարվող հիմնական պարագաները:

Արձագանքում

- Կառավարության և այլ գործընկերների հետ համատեղ հիմնել, ակտիվացնել և աջակցել երեխաների պաշտպանության, գենդերային բռնության ու ՀԱՀՍԱ հարցերով համակարգման մեխանիզմին՝ իրավիճակի արագ գնահատման, քարտեզագրման, ֆինանսավորման, ռազմավարության մշակման և տուժած բնակչության ներգրավման նպատակով:
- Զինված բախումների դեպքում, նախաձեռնել մոնիտորինգի ու հաշվետվականության մեխանիզմի ստեղծումը, որը կկենտրոնանա երեխաների նկատմամբ խիստ խախտումների և երեխաների ու կանանց նկատմամբ սեռական բռնության դեպքերի վրա, որի արդյունքների հիման վրա հնարավոր կլինի մշակել գործողության պլաններ, և ապահովել, որ տուժած երեխաներն ու կանայք ուղեգրվեն համապատասխան ծառայություններ:
- Աջակցել կանանց և երեխաների համար ապահով համայնքահեն վայրերի ստեղծմանը, ներառյալ երեխաների համար նախատեսվածները, որտեղ հատուկ ուշադրություն կդարձվի աղջիկների, դեռահասների և նրանց խնամակալների հարցերին, և աջակցել վաղ մանկության շրջանի զարգացումը խթանող գործողությունների իրականացմանը:
- Ապահովել գրանցման և հսկողության ընդհանուր ձևաթղթերի օգտագործումը, և ուսումնասիրել երեխաների պաշտպանության ոլորտի միջգերատեսչական տվյալների բազայի օգտագործման հնարավորությունները, որի օգնությամբ կհայտնաբերվեն, կգրանցվեն, կստուգվեն, կվերամիավորվեն և կհսկվեն ընտանիքից բաժանված և առանց հսկողության մնացած երեխաները:
- Անհապաղ կերպով քարոզել ընտանիքից բաժանված երեխաների համար ընտանեկան խնամքի հնարավորություններ ստեղծելու համար և աշխատել տեղափոխման ընթացքում ու տնտեսական խիստ կարիքի

հետևանքով երեխաների իրենց ընտանիքներից բաժանվելը կանխարգելելու ուղղությամբ:

- Մոբիլիզացնել երեխաների և կանանց սոցիալական աջակցության գոյություն ունեցող ցանցերը, և աջակցել երեխաների և կանանց համար տարիքին, գենդերին և տեղական մշակույթին համապատասխան կանոնավոր գործունեության վերականգնմանը:
- Ձեռք բերել զինված խմբերի և ուժերի համաձայնությունը դադարեցնել կամ խուսափել երեխաներին նման գործողություններում ներքաշելուց և օգտագործելուց՝ համաձայն Փարիզյան հանձնառությունների, բանակցել, որպեսզի զինված գործողությունների մասնակիցները և խնամառուները հսկվեն, և գրանցել, նույնականացնել և ազատել նման գործողություններում մասնակցող երեխաներին:
- Հանդես գալ երեխաների անօրեն կամ կամայական կալանքի դեմ, և աջակցել օրենքի հետ առնչվող երեխաների համար իրավաբանական և այլ ծառայությունների հասանելիությունը բարելավելուն:
- Բացահայտել ականներից, այլ պայթուցիկ նյութերից, չհսկվող զենքից ու զինամթերքից սպառնացող վտանգները: Համակարգել և իրականացնել պայթուցիկ նյութերի ռիսկերի մասին հատուկ դասընթացներ, և մոնիտորինգի ենթարկել, զեկուցել և հանդես գալ չհսկվող զենքի ու զինամթերքի օգտագործման կամ առկայության դեմ:
- Որոշել մատակարարման կարիքները և փոխանցել Մատակարարման և կազմակերպչական հարցերով զբաղվող բաժնին:

Արագ վերականգնում

- Ամրապնդել իշխանությունների կամ տեղացի այլ գործընկերների մասնակցությունը համակարգման մեխանիզմի գործունեությանը:
- Աջակցել գործընկերներին պաշտպանության ոլորտի լուրջ դեպքերի մոնիտորինգի ու հաշվետվականության հարցում, ժամանակին արձագանքում ապահովելու նպատակով:
- Հզորացնել իշխանությունների, համայնքի և պաշտպանության կառույցների երեխաների և կանանց իրավունքների պաշտպանություն իրականացնելու կարողությունները:
- Խթանել և աջակցել, որպեսզի երեխաների և կանանց իրավունքներին առնչվող դրույթները ընդգրկվեն օրենսդրության և անվտանգության ոլորտների բարեփոխումների շարքում, աջակցել ծննդյան գրանցման համակարգերի վերամեկնարկմանը և/կամ դրանց հզորացմանը:

- Մշակել խնամակալության և խնամատարության ապահով և բարենպաստ համակարգեր, հնարավորության դեպքում, դեմ հանդես գալ վաղաժամ որդեգրման դեպքերին և, ելնելով երեխայի լավագույն շահերից, զարգացնել սոցիալական ապահովության պետական համակարգերը:
- Ներգրավել տեղական դերակատարներին բռնության և շահագործման դեպքերի լուծմանը և աջակցել ծառայություն մատուցողներին, իրավապահ մարմիններին, կանանց իրավունքներով զբաղվող խմբերին, համայնքներին և երեխաներին բռնությունը, ներառյալ գենդերային բռնությունը, շահագործումն ու վիրավորանքը կանխարգելելու գործում:
- Ինտեգրել երեխաների և կանանց համար սոցիալ-հոգեբանական աջակցությունը երեխաների համար նախատեսված տեղերում և պաշտպանության այլ գործողություններում, և համագործակցել ու դիմել այլ ոլորտների ՀԱՀՍԱ-ի հետ:
- Մշակել դեինստիտուցիոնալիզացիայի գործընթացում ներառական համայնքահեն մոտեցում՝ հիմնվելով Փարիզյան սկզբունքների վրա:
- Մշակել կանանց և երեխաների համար սոցիալական վերաինտեգրացիայի և տնտեսական աջակցության չխարանող համայնքահեն մոտեցումներ:
- Խրախուսել, որպեսզի ականապատման ռիսկերի մասին հանրային ուսուցումն ընդգրկվի գոյություն ունեցող հանրային ուսուցման և իրազեկման ծրագրերի մեջ, և գործընկերների հետ համատեղ իրականացվող կանխարգելման, իրազեկման և զոհերի աջակցության ծրագրեր:
- Նախաձեռնել երեխաների և կանանց պաշտպանության ոլորտում տեղական և պետական կարողությունների բացերի վերլուծություն, և ապահովել, որ ռիսկերի նվազեցման նպատակով կարողությունների հզորացումը արագ արձագանքման և անցումային պլանների մաս կազմի:

2.7 Կրթություն

Ռազմավարական արդյունք. Կրթության ոլորտ		
Աղջիկների և տղաների համար հասանելի են ապահով ու անվտանգ կրթությունը և իրենց բարեկեցության համար անհրաժեշտ իրազեկվածությունը		
Հանձնառություններ		**Հենանիշներ**
Հանձնառություն 1. Հիմնված է կրթության կլաստերային/ միջգերատեսչական համակարգման արդյունավետ կառավարում (որտեղ առկա է նաև համաղեկավար կազմակերպություն), որը կարևոր միջգերատեսչական հարցերի շուրջ կապված է այլ կլաստերային/ միջգերատեսչական համակարգման մեխանիզմների հետ:	→	**Հենանիշ 1.** Համակարգման մեխանիզմը բոլոր գործընկերներին ուղեցույց է տրամադրում ընդհանուր ստանդարտների, ռազմավարությունների և մոտեցումների վերաբերյալ, ապահովում, որ հայտնաբերվել են կրթության ոլորտի բոլոր կարևոր բացերն ու խոցելի կողմերը, և տրամադրում տեղեկատվություն դերերի, պարտականությունների և հաշվետվականության վերաբերյալ՝ առանց կրկնողության բոլոր բացերի վերացման նպատակով:
Հանձնառություն 2. Երեխաների, ներառյալ նախադպրոցական տարիքի, աղջիկների և այլ չինտեգրված խմբերի, համար հասանելի են որակյալ կրթության հնարավորությունները:	→	**Հենանիշ 2.** Աղետից տուժած համայնքներում վերագործարկված են դպրոցները, հիմնված են արտակարգ իրավիճակներում երեխաների և դեռահասների համար ծրագրեր, ներառյալ վաղ մանկության տարիքի երեխաների համար խաղային և ուսուցողական գործողություններ:
Հանձնառություն 3. Հիմնված են ապահով և անվտանգ կրթօջախներ, որտեղ կարևորվում են սաների պաշտպանությունը և բարեկեցությունը:	→	**Հենանիշ 3.** Դպրոցներն ապահով են և զերծ բռնությունից, երեխաները, ներառյալ աղջիկները, կարող են ազատ տեղաշարժվել դպրոցից տուն ընկած հատվածում:
Հանձնառություն 4. Երեխաների և ուսուցիչների սոցիալ-հոգեբանական ծառայություններն ինտեգրված են կրթության ոլորտի արձագանքման գործողությունների մեջ:	→	**Հենանիշ 4.** Կրթության ոլորտի բոլոր մարդասիրական ծրագրերը ներառում են համապատասխան սոցիալ-հոգեբանական, առողջապահական և սնուցման ոլորտի միջամտություններ:
Հանձնառություն 5. Դեռահասների, երեխաների և նրանց խնամակալների համար հասանելի են կենսական կարողությունների զարգացման ծրագրերը և արտակարգ իրավիճակի մասին տեղեկատվությունը, և դպրոցից դուրս մնացածները, մասնավորապես դեռահասները, ստանում են կրթություն ստանալու հնարավորությունների մասին տեղեկատվություն:	→	**Հենանիշ 5.** Իրականացվում են համապատասխան կրթական ծրագրեր, ներառյալ դեռահասների և վաղ մանկության տարիքի երեխաների համար:

Տեխնիկական հիմնավորում/ ապացույցներ. Կրթությունը ոչ միայն իրավունք է, այլ նաև արտակարգ իրավիճակներում, տևական ճգնաժամի պայմաններում այն ապահովում է ֆիզիկական, հոգեբանական և ճանաչողական պաշտպանություն, որի հաշվին հնարավոր է կյանքեր փրկել և բարելավել: Կրթության դրական ազդեցությունը կյանքի վրա կայանում է նրանում, որ այն տրամադրում է ապահով տարածք ուսման և աղետից տուժածներին, մասնավորապես երեխաներին ու դեռահասներին, աջակցություն ցուցաբերելու համար: Կրթությունը նվազեցնում է կոնֆլիկտների և աղետների հոգեբանական ազդեցությունը՝ կայունության զգացում և ապագային նկատմամբ հույս ներշնչելու միջոցով, ինչպես նաև ապահովում է հետագա տնտեսական կայունության համար անհրաժեշտ հիմնաքարային գիտելիքները: Կրթությունը նաև կենսական կարևորություն ունի շահագործումից ու բռնությունից պաշտպանության, ճգնաժամին դիմակայելու համար անհրաժեշտ գիտելիք ու կարողություններ ձեռք բերելու առումով: Աղետի ռիսկերի մասին դասընթացների ինտեգրումը պետական կրթական ծրագրերում և անվտանգ կրթօջախների ստեղծումը այն երկու առաջնահերթություններն են, որոնք նպաստում են տվյալ պետության դեպի Հազարամյակի զարգացման նպատակներ առաջընթացին (տե՛ս INEE Արտակարգ իրավիճակներում, տևական ճգնաժամի և վաղ վերականգնման պայմաններում կրթության նվազագույն ստանդարտները):

Ծրագրային գործողություններ

Պատրաստվածություն

- Հստակեցնել արտակարգ իրավիճակներում կրթության ոլորտում ՅՈՒՆԻՍԵՖ-ի և վերջինիս գործընկերների պատասխանատվության շրջանակները:
- Հզորացնել գոյություն ունեցող համակարգման մեխանիզմները, կամ, դրանց բացակայության պարագայում, պետական իշխանությունների հետ համատեղ հիմնել այդ մեխանիզմները՝ մարդասիրական գործողությունների ժամանակայնությունն ու համակարգվածությունը, ինչպես նաև դրանց մարդասիրական գործողությունների սկզբունքների և համաձայնեցված ստանդարտների և հենանիշների համապատաս-խանությունն ապահովելու նպատակով:
- Աջակցել իրավիճակի բազմաոլորտային գնահատման, ներառյալ կրթու-թյան ոլորտի առաջնահերթ տվյալների հավաքագրման, մեխանիզմի և ֆորմատի կայացմանը:
- Խրախուսել, որպեսզի արտակարգ իրավիճակների մասին դասընթացները մաս դառնան կրթության ոլորտի պլանների ու բյուջեների, ներառյալ պատրաստվածության պլանները, նախատեսել կրթական և վաղ մանկության շրջանի զարգացման պարագաների

փաթեթներ կամ ձեռք բերել մատակարարների ու գործընկերների հետ ցպահանջ իրականացման պայմանավորվածություններ:

- Աջակցել պետական իշխանություններին ժամանակավոր կրթօջախների պլանավորման գործում, մշակել ուսումնական պրոցեսում բոլոր ձևերի բռնության, սեռական շահագործման, վիրավորանքի և խարանի կանխարգելման վարքագծային կանոններ, և ապահովել ՋՍՀ-ի և պաշտպանության ոլորտի կլաստերների ու գործընկերների հետ պատրաստվածության համատեղ պլանավորում (տե՛ս նաև ՋՍՀ-ն և երեխաների պաշտպանություն ԵԱՀ-ը):
- Աջակցել պետական իշխանություններին կրթության համակարգը արտակարգ իրավիճակներում սաների սոցիալ-հոգեբանական կարիքներին և սրված խոցելիությանը արձագանքելու պահանջներին հարմարեցնելու գործում, և ձեռք բերել համաձայնություն սոցիալ-հոգեբանական աջակցության, ռիսկերի ու խոցելիության նվազեցման, ինչպես նաև հիմնարար առողջապահական, հիգիենայի պահպանման և սնուցման խթանման մասին տեղեկատվական նյութերի ու մոտեցումների վերաբերյալ:
- Գործընկերների հետ համաձայնեցնել տեղեկատվական նյութերը և ռազմավարությունները, ներառյալ դեռահասների մասնակցությունը խթանող ռազմավարությունները, օգտագործելով արդեն իսկ տեղայնացված տեղեկատվական նյութերը:
- Խրախուսել դպրոցների արտակարգ իրավիճակներին պատրաստվածության պլանների մշակումը, կրթօջախների ապահով շինությունները, և դպրոցական ծրագրերում ներառել աղետների ռիսկերի նվազեցման նվազագույն միջոցառումները:
- Հզորացնել կրթության ոլորտում իշխանությունների կարողությունները բոլոր մակարդակներում արտակարգ իրավիճակներին արձագանքման համակարգը դպրոցներում ներդնելու համար:

Արձագանքում

- Հիմնել և գործի դնել կրթության ոլորտի կլաստերային թափանցիկ և ներառական համակարգման մեխանիզմ, և նշանակել միջգործակալական համակարգումը վարող աշխատակազմ:
- Վերանայել և մշակել կրթության ոլորտում արձագանքման շրջանակը, ռազմավարությունը և գործողությունների պլանը՝ հիմնվելով իրավիճակի գնահատման արդյունքների վրա:
- Իրականացնել ծրագրային գործողությունների մոնիտորինգ և ապահովել, որ բոլոր մակարդակներում առկա լինեն ճգնաժամի արձագանքման համար անհրաժեշտ կարողություններ:

- Ապահովել, որ կրթության ոլորտը արտացոլվի դոնորների ժողովներին, Արտակարգ իրավիճակների արձագանքման կենտրոնական ֆոնդին (CERF) և այլ ֆոնդերի ներկայացվող ծրագրային առաջարկներում այնպես, որ տվյալ ոլորտը դուրս չմնա պատշաճ ուշադրության շրջանակից:
- Խթանել և աջակցել դպրոցների վերաբացման և ոչ ֆորմալ կրթության և վերականգնողական ծրագրերի ստեղծման գործին, տրամադրել առաջնային կրթության, վաղ տարիքի ուսուցողական և վերականգնողական ուսուցողական նյութեր, և նախատեսել հատուկ միջոցառումներ կրթության համակարգ վերադառնալու համար օժանդակության կարիք ունեցող երեխաների (օրինակ, աղջիկների, խոցելի և սոցիալապես մեկուսացված խմբերի) համար:
- Հիմնել ժամանակավոր ուսուցման անվտանգ և ապահով տարածքներ բոլոր տարիքային խմբերի համար՝ խորհրդակցելով համայնքների ներկայացուցիչների հետ, և, անհրաժեշտության դեպքում, դպրոցների տարածքում հիմնել համայնքային ծառայություններ, ինչպիսիք են ջրամատակարարումը և սանիտացիան, ու իրականացնել հիգիենայի կանոնների պահպանման խրախուսման գործողություններ:
- Հասցեագրել կրթօջախների և դպրոցների տարածքում բռնության հարցերը, ներառյալ դպրոցի ճանապարհին երեխաների անվտանգությունը, հատուկ ուշադրություն դարձնելով դեռահասներին և աղջիկներին վերաբերող հարցերին:
- Մոբիլիզացնել սոցիալ-հոգեբանական աջակցության առկա բոլոր ռեսուրսները սաների և ուսուցիչների համար, և կազմակերպել համապատասխան գործողություններ ժամանակավոր կրթօջախներում, ինչպես նաև երեխաների ու դեռահասների համար նրանց համար նախատեսված տարածքներում, ու ստեղծել հիմնական առողջապահության և սնուցման ծառայությունների հետ առաջնային կապերը:
- Ապահովել համատեքստին համապատասխան կենսական կարողությունների զարգացման ծրագրերի և ուսուցողական նյութերի (օրինակ, առաջնային առողջապահության, սնուցման և հիգիենայի պահպանման թեմաներով), ինչպես նաև ՄԻԱՎ ՁԻԱՀ-ի կանխարգելման, պաշտպանության և աջակցության (տե՛ս նաև ՄԻԱՎ և ՁԻԱՀ ԵԱՀ-ն), գենդերային բռնության, կոնֆլիկտների լուծման, տվյալ իրավիճակի (օրինակ, երկրաշարժ և զինված բախում) մասին նյութերի մշակումն ու իրականացումը, ներգրավել տուժած բնակչությանը, մասնավորապես դեռահասներին ու երիտասարդներին:

- Որոշել մատակարարման կարիքները և փոխանցել Մատակարարման ու կազմակերպչական հարցերով զբաղվող բաժիններին:

Արագ վերականգնում

- Ապահովել, որ կրթության ոլորտի կլաստերային համակարգման մեխանիզմն ինտեգրի արտակարգ իրավիճակի արձագանքման գործողություններ, որոնք մշակված են երկարաժամկետ տեսլականի և վերականգնման պլանների լույսի ներքո:
- Ըստ հանգամանքների, մասնակցել, հիմնել կամ ղեկավարել կրթության ոլորտում արագ վերականգնման գործողությունների համակարգման մեխանիզմ, և աջակցել արագ վերականգնման կլաստերի/ ցանցի գործունեությանը:
- Ապահովել, որ կրթության ոլորտում արտակարգ իրավիճակի արձագանքման գործողությունների իրականացումը ներառի երեխաների համար նախատեսված մոտեցումների սկզբունքները:
- Ապահովել, որո կրթության ոլորտի միջամտությունները հիմնվեն աղետի ռիսկերի ճշգրիտ գնահատման և վերլուծության արդյունքների վրա:
- Քարոզել և աջակցել դպրոցների վերակառուցմանը՝ ըստ անվտանգ, ներառական, հավասարություն ապահովող և երեխայակենտրոն մոդելների, ներառյալ առանց որևիցե խտրականության բոլոր երեխաների համար, ինչպես նաև դպրոցների արտակարգ իրավիճակների պատրաստվածության պլանների մշակմանը:
- Աջակցել, որ աղետների ռիսկերի նվազեցման պլանները ընդգրկվեն կրթության ոլորտի պլաններում և բյուջեներում:
- Քարոզել և աջակցել դպրոցների վերակառուցման համար կայուն, համապատասխան, երեխայակենտրոն և դիմակայուն ստանդարտների և նախագծերի մշակմանը:
- Խթանել ուսուցիչների և մանկավարժների համապատասխան վարձատրությունը՝ համաձայն համաձայնեցված միջգերատեսչական ուղեցույցների:
- Խթանել և աջակցել կենսական կարողությունների, հատկապես աղետների ռիսկերի նվազեցման մասով, զարգացման ծրագրերի ինտեգրումը ֆորմալ և ոչ ֆորմալ կրթական ծրագրերում:
- Ձեռնարկել կրթության ոլորտում տեղական և պետական կարողությունների բացերի վերլուծություն, և ապահովել, որ կարողությունների հզորացման պլանները արագ վերականգնման և անցումային պլանների մաս կազմեն՝ ռիսկերի նվազեցման նպատակով:

2.8 ՄԻԱՎ և ՁԻԱՀ

Ռազմավարական արդյունք. ՄԻԱՎ և ՁԻԱՀ		
Հումանիտար ճգնաժամում ՄԻԱՎ վարակի նկատմամբ խոցելիությունը չի աճել և հումանիտար ճգնաժամի արդյունքում ՄԻԱՎ վարակակիրների խնամքի պահանջները բավարարված են.		
Հանձնառություններ		**Հենանիշներ**
Հանձնառություն 1. Երեխաների, երիտասարդների և կանանց համար հասանելի է կանխարգելման, խնամքի և բուժման վերաբերյալ տեղեկատվությունը:	→	**Հենանիշ 1.** Տուժած բնակչության 90%-ին տրամադրվել է կանխարգելման, խնամքի և բուժման մասին տեղեկատվություն:
Հանձնառություն 2. Երեխաների, երիտասարդների և կանանց համար հասանելի են ՄԻԱՎ և ՁԻԱՀ-ի կանխարգելումը, խնամքը և բուժումը ճգնաժամի ընթացքում:	→	**Հենանիշ 2.** Տուժած բնակչության 80%-ին հասանելի են ՄԻՁՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման, խնամքի և բուժման ծառայությունները, օրինակ, բռնաբարությունից դեպքից հետո ցուցաբերվող աջակցություն և խնամք, ներառյալ կանխարգելիչ միջոցառումներ, սեռական ճանապարհով փոխանցվող վարակների բուժում, մորից մանկան ՄԻԱՎ-ի փոխանցման կանխարգելում (ՄՄՓԿ) և հակառետրովիրուսային բուժում (ART):
Հանձնառություն 3. Երեխաների, երիտասարդների և կանանց համար կանխարգելման, խնամքի և բուժման ծառայությունները շարունակվում են:	→	**Հենանիշ 3.** Նախկինում ՄԻԱՎ խնամք և բուժում ստացող աղետից տուժած բնակչության 80%-ը շարունակում է ստանալ հակառետրովիրուսային բուժում ՄՄՓԿ-ի համար, ինչպես նաև հակառետրովիրուսային ստացող երեխաներն ու երիտասարդները շարունակում են բուժում ստանալ:

Տեխնիկական հիմնավորում/ապացույց. Ողջ աշխարհում ՄԻԱՎ-ի և հումանիտար իրավիճակների ծածկույթները մեծապես համընկնում և փոխկապակցվում են: Քանի որ ՄԻԱՎ վարակը անդառնալի է, կենսական կարևորություն ունեն ցանկացած պայմաններում համապատասխան կանխարգելման միջոցառումները, ներառյալ հումանիտար իրավիճակներում: Փորձով ապացուցված է, որ ՄԻԱՎ և ՁԻԱՀ-ի խնամքի և բուժման նախաձեռնությունների իրականացումը, ներառյալ համապատասխանության պահանջների բավարարումը, գործնականում հնարավոր են, իսկ մահացության մակարդակի նվազումը պատշաճ կերպով գրանցված է:

Ծրագրային գործողություններ

Պատրաստվածություն

- Մշակել համատեքստին համապատասխանող ՄԻԱՎ-ի վերաբերյալ տեղեկատվական նյութեր, գտնել և ներգրավել գոյություն ունեցող համայնքային ցանցերը, և համագործակցություն հիմնել տարբեր կլաստերների միջև՝ ապահովելու ՄԻԱՎ ոլորտի ընդգրկումը ոլորտային արձագանքման գործողություններում:
- Գործընկերների հետ համաձայնեցնել երեխաների և կանանց հսկողության մեխանիզմները՝ ապահովելու, որ վերջիններիս համար շարունակաբար հասանելի են ՄԻԱՎ ոլորտի հիմնական ծառայությունները, և նախապատրաստվելու դեղորայքի հավելյալ արագ մատակարարման գործողություններին:
- Ապահովել, որ ՄՄՓԿ կանխարգելման ծառայություններում հաշվեգրված բոլոր կանայք և ART օգտագործող համայնքի բոլոր անդամները, ներառյալ երեխաները, ունեն գրանցաքարտեր, որտեղ պատշաճ կերպով ներկայացված են բուժման մանրամասները:

Արձագանքում

- Ապահովել համայնքներում առողջ ապրելակերպի քարոզարշավներում, ինչպես նաև կրթության ոլորտի նախաձեռնություններում ՄԻԱՎ-ի մասին բավարար տեղեկատվության տրամադրումը:
- Ապահովել նախկինում ՄՄՓԿ և ՀՌԲ օգտագործող հիվանդների հսկողություն, և նրանց ուղեգրել առողջապահական հաստատություններ խնամք ապահովելու նպատակով, ներառյալ սնուցման, նորածինների կերակրման մասին խորհրդատվության և աջակցության համար:
- Երեխաներին ու մայրերին տեղեկացնել, թե որտեղ նրանք կարող են ստանալ հիմնական առողջապահական ծառայություններ և աջակցություն, ներառյալ պահպանակների տրամադրում, սեռական ճանապարհով վարակների բուժում, այլ վարակների կանխարգելում և բուժում, կոտրիմոքսազոլի տրամադրում, ՄՄՓԿ և ՀՌՎ ծառայությունների շարունակություն, սնուցման կարիքների բավարարում, սոցիալ-հոգեբանական աջակցություն երեխաների և նրանց խնամակալների համար:
- Ապահովել հիվանդների համար շարունակական հասանելիությունը ՄՄՓԿ և ՀՌԲ դեղորայքին, խնամքին և աջակցությանը, ներառյալ նորածինների կերակրման մասին խորհրդատվությանն և աջակցությանը, ՄԻԱՎ-վարակակիր մայրերի շարունակական աջակցությանը՝ համաձայն

ընդունելիության, հնարավորության, մատչելիության, կայունության և անվտանգության չափանիշների և կանոնների (AFASS), սուր թերսնուցման բուժմանը, ARV կանխարգելմանը և կոտրիմոքսազոլի տրամադրմանը:

- Ապահովել սոցիալ-հոգեբանական աջակցության տրամադրում բռնաբարության զոհերին, ներառյալ երեխաներին:
- Որոշել մատակարարման կարիքները և փոխանցել Մատակարարման և կազմակերպչական հարցերով զբաղվող բաժիններին:

Արագ վերականգնում

- Հզորացնել և աջակցել գոյություն ունեցող ցանցերին, ինչպես նաև աջակցել «հավասարը հավասարին» ուսուցման ցանցերի ընդլայնմանը:
- Ներգրավել ՄԻԱՎ-վարակակիր երեխաներին, կանանց և մարդկանց տեղեկատվական պլանների և ուղերձների մշակման գործում:
- Սկսել ճգնաժամի արդյունքում դադարեցված կանխարգելման, խնամքի և բուժման ծառայությունների վերագործարկման գործընթացը, և ապահովել անանունությունը:
- Ձեռնարկել տեղական և պետական իշխանությունների կարողությունների բացերի վերլուծություն, և ապահովել ՄԻԱՎ և ՁԻԱՀ ոլորտում արագ վերականգնման և անցումային պլանների հարցում կարողությունների հզորացում՝ հատուկ ուշադրություն դարձնելով ռիսկերի նվազեցմանը:

2.9 Մատակարարում և կազմակերպչական աջակցություն

Ռազմավարական արդյունք. Մատակարարում և կազմակերպչական աջակցություն		
Հիմնական պարագաները հասանելի են աղջիկների, տղաների և կանանց համար՝ գլոբալ, պետական և օգտագործման կետերի մակարդակներում		
Հանձնառություններ		**Հենանիշներ**
Հանձնառություն 1. Կանանց և երեխաների շրջանում մարդկային տառապանքը Նվազեցնելու համար անհրաժեշտ հիմնական Պարագաները տրամադրված են ՅՈՒՆԻՍԵՖ-ի և վերջինիս գործընկերների կողմից:	→	**Հենանիշ 1.** Տուժած բնակչության 90%-ին տրամադրվել է կանխարգելման, խնամքի և բուժման մասին տեղեկատվություն:
Հանձնառություն 2.ՅՈՒՆԻՍԵՖ-ի և վերջինիս Գործընկերների կողմից իրականացվող արձագանքման գործողություններն ապահովված են անհրաժեշտ ռեսուրսներով:	→	**Հենանիշ 2.** Տուժած բնակչության 80%-ին հասանելի են ՄԻԶՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման, խնամքի և բուժման ծառայությունները, օրինակ, բռնաբարությունից դեպքից հետո ցուցաբերվող աջակցություն և խնամք, ներառյալ կանխարգելիչ միջոցառումներ, սեռական ճանապարհով փոխանցվող վարակների բուժում, մորից մանկան ՄԻԱՎ-ի փոխանցման կանխարգելում (ՄՄՓԿ) և հակառետրովիրուսային բուժում (ՀՌԲ):

Ծրագրային գործողություններ

Պատրաստվածություն

- Որոշել և ի մի բերել բոլոր ԵԱՀ գործողությունների իրականացման համար անհրաժեշտ պարագաների ցուցակները, ձեռք բերել երկարաժամկետ համաձայնագրեր գլոբալ, պետական և տարածաշրջանային մակարդակներում մատակարարների հետ:
- Որտեղ հնարավոր է, կազմակերպել արտակարգ իրավիճակներում անհրաժեշտ պարագաների համապատասխան և արդյունավետ պահեստավորման ռազմավարություններ, ձեռք բերել երկարաժամկետ համաձայնագրեր (ծառայություններ մատուցողների և այլ կազմակերպությունների հետ) ծովով և ցամաքով փոխադրման ծառայությունների տրամադրման համար, և գնահատել հնարավոր տեղական գործընկերների գնումների ընթացակարգերը:
- Ձեռք բերել գործընկերության մասին համաձայնագրեր ապրանքների և ծառայությունների տրամադրման մասին:
- Նշանակել Մատակարարման և կազմակերպչական հարցերով զբաղվող բաժնի աշխատակազմի անդամներ, որոնք կանցնեն արտակարգ

իրավիճակներում ապրանքների միջգերատեսչական մատակարարման դասընթաց-սիմուլացիա, վկայագրում և ուսուցման այլ ձևեր:

- Կազմել Մատակարարման և կազմակերպչական հարցերով զբաղվող բաժնի հնարավոր աշխատակիցների անվանացուցակ՝ ներքին և արտաքին թեկնածուների ցանկերում ընդգրկելու համար, և տրամադրել այդ ցուցակը Մատակարարման բաժնին:
- Ապահովել, որ Մատակարարման և կազմակերպչական հարցերով զբաղվող բաժնի աշխատակիցները ծանոթանան ինտրանետում առկա մատակարարման գործիքների և ձևաթղթերի հետ, և ծրագրային հիմնական աշխատակազմին ծանոթացնել արտակարգ իրավիճակների գործընթացներին, ծովով և ցամաքով փոխադրման գործողությունների և կազմակերպչական գործերի արժեքներին:
- Գործունեության շարունակականությունն ապահովելու նպատակով ապահովել, որ մատակարարների հետ ձեռք բերվեն արտակարգ իրավիճակներում գործող համաձայնագրեր: Սա կներառի այդ կառույցների հետ ծառայության մակարդակի համաձայնագրեր, ապահովելով ՅՈՒՆԻՍԵՖ-ին՝ որպես առաջնահերթ հաճախորդ դիտարկելու կարգավիճակը:
- Որոշել այլընտրանքային ռազմավարություններ այն դեպքերի համար, երբ մատակարարները ի վիճակի չեն լինի իրականացնել նախնական համաձայնությունները:
- Իրականացնել մատակարարման պլանավորման վարժություններ, որոշելու միջնաժամկետ և երկարաժամկետ մատակարարման ենթակա պարագաները, և գտնել հնարավոր տեղական և տարածաշրջանային աղբյուրները:
- Գնահատել կառավարական և այլ գործընկեր կառույցների մատակարարման կարողությունները հատուկ ապրանքների, ներառյալ շինանյութի, համար:
- Որոշել կառավարական և այլ գործընկեր կառույցների կարողությունների բացերը, մշակել կարողությունների հզորացման պլան՝ միտված արձագանքման գործողություններին հաջորդող իրավիճակներում կազմակերպչական աջակցության գործողությունների հնարավոր փոխանցմանը:

Արձագանքում

- Ապահովել կազմակերպչական հարցերով զբաղվող գործընկերների հետ վաղ համագործակցություն, ապահովել ՅՈՒՆԻՍԵՖ-ի ներկայությունը կազմակերպչական հարցերով զբաղվող կլաստերում, ակտիվորեն

համագործակցել ՅՈՒՆԻՍԵՖ-ի կողմից գլխավորած կլաստերների հետ՝ դրանց տրամադրելով մատակարարման գործողությունների հետ կապված ուղեցույց, ներառյալ անվճար կամ ցուցակագրված փոխադրամիջոցների հնարավոր տրամադրում, պահեստավորում և այլ ծառայություններ:

- Արտակարգ իրավիճակի վաղ փուլերում տրամադրել ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ մատակարարման ծառայություններ, ապահովել առաջին արձագանքման մատակարարման պլանի մշակումը և, որ ապրանքների արժեքը (ներառյալ ծովով և ցամաքում իրականացվող կազմակերպչական աջակցության արժեքը) հաշվարկված և ընդգրկված լինի բյուջեներում և ծրագրային առաջարկներում:
- Մատակարարման բաժնի հետ համատեղ և տարածաշրջանային գրասենյակի աջակցությամբ մշակել գործառնությունների Մատակարարման և կազմակերպչական հարցերի հայեցակարգ, մանրամասնելով մատակարարման աղբյուրների, սահմանների հատման, պահեստային պահանջների, միջանցքների, գործընկերների և փոխադրման հնարավոր խոչընդոտների մասին տվյալներ, ապահովել համապատասխան և ընդունելի պահեստային պայմաններ:
- Ապահովել մատակարարման շղթայի համապատասխան կառավարում, մասնավորապես հսկողության և գույքագրման մասով:
- Իրականացնել աղբյուրից մինչև սպառման վերջնակետ մատակարարման և կազմակերպչական գործողությունների մոնիտորինգ և պարբերաբար զեկուցել ապրանքների մուտքի և ելքի մասին:
- Գործառնությունների կազմակերպչական հարցերի մասին հայեցակարգի և մատակարարման նախնական պլանի հիման վրա 72 ժամվա ընթաց-քում տեղեկացնել լրացուցիչ մարդկային ռեսուրսների կարիքների մասին:

Արագ վերականգնում

- Մշակել մատակարարման միջնաժամկետ կամ երկարաժամկետ պլան, որտեղ կներկայացվեն ռեսուրսների և անձնակազմի կարիքները, ինչպես նաև գործառնությունների կազմակերպչական հարցերի մասին հայեցակարգի վերանայված տարբերակը, որը կվերաբերի վերջին փուլից մինչև տարեկան աշխատանքային պլանի հաջորդ տարբերակը ընկած ժամանակահատվածին:

III. Գործառնական հանձնառություններ

ՅՈՒՆԻՍԵՖ-ը կապահովի, որ իր լայնածավալ մեդիայի և հաղորդակցության միջոցները, մարդկային ռեսուրսները, անվտանգությունը, ռեսուրսների համախմբումը, ֆինանսներն ու վարչարարությունը, տեղեկատվության և հաղորդակցության համակարգերը իրականացնեն ճգնաժամային իրավիճակներում գտնվող երեխաների կարիքների վերաբերյալ համաշխարհային հանձնառությամբ սահմանվող պահանջները: Այն ակնկալում է իր գործընկերներից, որ վերջիններս ՅՈՒՆԻՍԵՖ-ի հետ համագործակցության ընթացքում գործի կդնեն իրենց մասնագիտական և գործառնական կարողությունները:

Հնարավորության դեպքում, ՅՈՒՆԻՍԵՖ-ը կիզորացնի արտակարգ իրավիճակներում գտնվող երեխաների իրավունքները պաշտպանելու իր գործընկերների կարողությունները:

3.1 Մեդիա և հաղորդակցություն

Հանձնառություն 1	Երեխաների և կանանց վրա իրավիճակի ազդեցության մասին ճշգրիտ տեղեկությունները արագորեն կտրամադրվեն պետական հանձնաժողովներին և լայն հանրությանը տեղական և միջազգային տեղեկատվության միջոցներով:
Հանձնառություն 2	Հումանիտար կարիքների և դրանց արձագանքման գործողությունների մասին հավաստի հաղորդագրությունները կտրամադրվեն ժամանակին, նպաստելով երեխայակենտրոն լուծումների խթանման, արձագանքման գործողությունների ընդլայնման և, անհրաժեշտության դեպքում, ֆոնդերի հայթայթմանը օժանդակություն ցուցաբերելու նպատակով:

Պատրաստվածություն

- Ապահովել, որ հաղորդակցության ռազմավարությունը պատրաստվածության պլանի մաս կազմի:
- Հայտնաբերել տեղեկատվության և հաղորդակցության, ինչպես նաև հաշվետվություններ կազմելու կարողությունների պահանջները:
- Սահմանել համապատասխան խոսքի կարողություններ ունեցող աշխատակազմի անդամների ցուցակ, ովքեր իրավասու կլինեն արտակարգ իրավիճակներում լրատվամիջոցների հետ զրուցելու, ինչպես նաև ունենալ լրատվամիջոցների կոնտակտային անձանց և ՅՈՒՆԻՍԵՖ-ի արտակարգ իրավիճակների հարցերով զբաղվող անձանց ցուցակները:

- Մատակարարման և կազմակերպչական հարցերով զբաղվող բաժնի հետ համատեղ՝ ապահովել հաղորդագրությունների համար անհրաժեշտ հիմնական սարքավորումների և տեսանելիության ապահովման պարագաների առկայությունը, ինչպիսիք են, օրինակ, արբանյակային հեռախոսները, տեսախցիկները, ֆոտոխցիկները, փակցնելու նյութերը և պաստառները:
- Ապահովել երեխաներին ու կանանց վերաբերող հարցերի մասին ստանդարտ ուղերձների, հայտարարությունների, տվյալների և պետության մասին տեղեկությունների առկայությունը, որը հնարավոր է անմիջապես թարմացնել և օգտագործել արտակարգ իրավիճակներում:
- Ապահովել, որ նախապես պատրաստվեն հիմնական լրատվամիջոցների և հաղորդակցման ծառայությունների հետ կնքվելիք պայմանագրերը:

Արձագանքում

- Քսանչորս ժամվա ընթացքում լրատվամիջոցներին, լայն հանրությանը և պետական հանձնաժողովներին տրամադրել երեխաների և կանանց անհապաղ կարիքների մասին տեղեկատվություն՝ իրազեկվածության մակարդակը անմիջապես բարձրացնելու նպատակով:
- Առաջին շաբաթվա ընթացքում ներքին շրջանառության նպատակով հրապարակել օրական հաղորդագրություններ, հիմնական ուղերձներ և հարց ու պատասխաններ, ինչպես նաև պարբերական հաղորդագրություններ՝ արտաքին օղակների համար:
- Ապահովել, որ հաղորդագրությունների նյութերը համապատասխանեն ՄԱԿ-ի ուղեցույցներին և համահունչ լինեն ՄԱԿ-ի տվյալ երկրում ներկայացուցչության և ԵՄԹ-ի գլխավոր ուղերձի հետ:
- Երեխաների իրավունքների կոպիտ խախտումների դեպքում և/կամ ճգնաժամային իրավիճակներում 24 ժամվա ընթացքում խորհրդակցել տարածաշրջանային և գլխավոր գրասենյակի հետ, թե ինչ ճանապարհով քարոզել երեխաների իրավունքների պաշտպանության համար, և տեղեկացնել ՄԱԿ-ի տվյալ երկրում ներկայացուցչությանը կամ ԵՄԹ-ին: Երկրում ռիսկերի կառավարման վերլուծությունը պետք է իրազեկի տեղեկատվությունը: Անհրաժեշտության դեպքում, աջակցել քարոզարշավ իրականացնող գործընկերներին:
- Քանի դեռ լրատվամիջոցների ուշադրությունը սևեռված է տվյալ խնդրին, պետական հանձնաժողովներին, լրատվամիջոցներին և լայն հանրությանը հաղորդագրություններ տրամադրել երեխաներին վերաբերող հարցերի և հումանիտար արձագանքման գործողությունների մասին: Օգտագործել հարցազրույցներ, հետաքրքիր պատմվածքներ, բրիֆինգներ, ֆոտո և

տեսանյութեր, որոնք ներկայացնում են երեխաների և երիտասարդների ձայնը:
- Դաշտային այցերի ժամանակ ապահովել, որ ՅՈՒՆԻՍԵՖ-ի նշանը կրող նյութերը տեսանելի են:
- Որոշել մատակարարման կարիքները և փոխանցել Մատակարարման ու կազմակերպչական հարցերով զբաղվող բաժնին:

Արագ վերականգնում

- Քարոզել, որ երեխաների մասին տրվող հաղորդագրություններում պահպանվեն էթիկայի նկատառումները, որտեղ հնարավոր է նպաստել տեղական և պետական լրատվամիջոցների կարողությունների զարգացմանը և երիտասարդների, հատկապես աղջիկների, հզորացմանը:
- Ձեկուցել հումանիտար և արագ վերականգնման գործողությունների, երեխաների և կանանց ընթացիկ կարիքների և այլ շահագրգիռ կողմերի, ներառյալ տուժած համայնքների, ձեռնարկած գործողությունների մասին:
- Հնարավորության դեպքում լրատվամիջոցների, հեղինակավոր անձանց, Բարի կամքի դեսպանների, պետական հանձնաժողովների և դոնորների համար կազմակերպել դաշտային այցելություններ:

3.2 Անվտանգություն

Հանձնառություն 1	Աշխատակազմի և գույքի անվտանգությանը, հետևաբար նաև արձագանքման գործողությունների հաջողությանը սպառնացող ռիսկերը հայտնաբերված, գնահատված և լուծված են:

Պատրաստվածություն

- Ապահովել, որ գնահատվեն արտակարգ իրավիճակի արձագանքման գործողությունների պլանի հետ կապված բոլոր հնարավոր ռիսկերը:
- Քննության առնել ՄԱԿ-ի մարդասիրական ծրագրերի առնչությամբ անվտանգության ռիսկերի գնահատման ուղեցույցը և մշակել ու վարել ՅՈՒՆԻՍԵՖ-ի անվտանգության պլան (որպես ՄԱԿ-ի անվտանգության պլանի հավելված), որը կապված կլինի ՄԱԿ-ի մարդասիրական արձագանքման գործողությունների պլանի հետ:
- Մշակել և վարել ՅՈՒՆԻՍԵՖ-ի անվտանգության պլան, որի համար նաև կնախատեսվեն ֆինանսական ռեսուրսներ, աշխատակազմի վերապատ-

րաստում (ներառյալ անվտանգության պլանի հիմնական կետերի փորձարկումը), Անվտանգության նվազագույն կիրառելի ստանդարտների (ԱՆԿՍ/MOSS) պահանջներից բխող անհրաժեշտ սարքավորումների գնում, ապահովել ԱՆԿՍ-ներից բխող գրասենյակային պահանջների բավարարումը և ԱՆԿՍ-ներին առնչվող ընթացակարգերի ներդրումը:

- Աղետի ազդեցության նվազեցման հետ կապված անվտանգության պլանի կետերը կապել գործունեության շարունակականությունն ապահովող պլանների հետ, գնահատել անվտանգության ամենօրյա միջոցառումների և անվտանգության պլանի հիմնական կետերի արդյունավետությունը, ինչը հնարավորություն կտա կառավարելու աշխատակազմին և գույքին սպառնացող ռիսկերը:

Արձագանքում

- Անմիջապես իրականացնել անվտանգության պլանը, ներառյալ բոլոր աշխատակիցների գտնվելու վայրի որոշումը, և Ապահովության ու անվտանգության բաժնի հետ համատեղ՝ վերանայել անվտանգության միջոցառումների արդյունավետությունը:
- Ապահովել, որ բոլոր աշխատակիցները, ծրագրերն ու գրասենյակներն ունենան ԱՆԿՍ-ին առնչվող համապատասխան սարքավորումները և ծրագրերի իրականացման ընթացքում հետևում են անվտանգության ընթացակարգերին:
- ՄԱԿ-ի անվտանգության խորհրդականների հետ համատեղ պարբերաբար վերանայել անվտանգության ռիսկերի գնահատման արդյունքում տեղի ունեցած ծրագրային փոփոխությունները՝ փոփոխվում իրավիճակի պայմաններում:
- Որոշել մատակարարման կարիքները և փոխանցել Մատակարարման և կազմակերպչական հարցերով զբաղվող բաժնին:

Արագ վերականգնում

- Վերանայել ՅՈՒՆԻՍԵՖ-ի անվտանգության պլանն այնպես, որ այն ներառի հետաղետային իրավիճակի ռիսկերը, մոնիտորինգի ենթարկել անվտանգության միջոցառումների և պլանների արդյունավետությունը:

3.3 Մարդկային ռեսուրսներ

Հանձնառություն 1	Համապատասխան և փորձառու, անհրաժեշտ վերապատրաստում անցած աշխատակազմ և կադրեր կան և անմիջապես տեղակայվել են, ներքին կադրերի նախապատվությամբ: Սա համալրվում է նաև արտաքին կադրերի ներգրավմամբ և պատրաստի կադրերի առկայությամբ, ինչը թույլ է տալիս, անհրաժեշտության դեպքում, հնարավոր երկարաժամկետ պաշտոնները արագ համալրել:.
Հանձնառություն 2	Աշխատակազմի բարեկեցությունն ապահովված է:
Հանձնառություն 3	Հումանիտար աշխատողների կողմից սեռական շահագործումն ու բռնությունը կանխարգելված են:
Հանձնառություն 4	ՅՈՒՆԻՍԵՖ-ի և հիմնական գործընկերների աշխատակազմի անդամներն ունեն արտակարգ իրավիճակների պատրաստվածության և արձագանքման մասին արդյունավետ գիտելիքներ և ունակություններ: Դա ներառում է հումանիտար բարեփոխումների և կլաստերային մոտեցման իմացություն:

Պատրաստվածություն

- Անհապաղ և միջնաժամկետ կարիքների համար մշակել և վարել աշխատակազմի մոբիլիզացման պլան, գոյություն ունեցող համակարգերի և կանոնակարգերի միջոցով որոշել և զեկուցել կադրային կարիքների մասին: Տարածաշրջանային մակարդակում վերլուծել ռիսկերի հնարավոր նվազեցումը և սահմանել բացերն ու գործողությունները:
- Տեղակայման վերապատրաստումը ներառել որպես աշխատանքի ընդունման գործընթացի հիմնական մաս:
- ՅՈՒՆԻՍԵՖ-ի տեղակայման ընթացքում աշխատակազմին տրամադրել իրենց բարեկեցությունն ապահովող տեղեկատվություն և աջակցություն, ներառյալ ապահովության ու անվտանգության միջոցառումների և ընթացակարգերի, ՄԻԱՎ և ՁԻԱՀ-ի, տրավմատիկ սթրեսի և աշխատանքային քրոնիկ սթրեսի մասին տեղեկատվություն:
- Աշխատակազմին տրամադրել ՄԱԿ-ի սեռական շահագործման և բռնության վերաբերյալ վարքագծային կանոնները, ինչպես սահմանված է Գլխավոր քարտուղարության փաստաթղթում, ներդնել մոնիտորինգի և բողոքների ներկայացման մեխանիզմ կազմակերպության ներսում՝ որպես Գլխավոր ասամբլեայի զոհերի աջակցության քաղաքականության պահանջ, և վերապատրաստել նշանակված պատասխանատուներին:

- Մշակել և իրականացնել վերապատրաստումների շարք, որը կներառի ՅՈՒՆԻՍԵՖ-ի և գործընկերների աշխատակիցների արտակարգ իրավիճակների պատրաստվածության և արձագանքման կարողությունների հզորացում, ինչպես նաև Մարդասիրական գործողությունների սկզբունքային մոտեցման թեմայով էլեկտրոնային ուսուցման դասընթացներ:
- Ապահովել, որ ՅՈՒՆԻՍԵՖ-ի բոլոր նոր աշխատակիցները անցնեն ներածական վերապատրաստում, որտեղ ինտեգրված են արտակարգ իրավիճակներին վերաբերող բոլոր հիմնական բաղադրիչները, և ներդնել ՅՈՒՆԻՍԵՖ-ի համապատասխան աշխատակիցների, գործընկերների և խորհրդատուների համար տեղակայման վերապատրաստման համար անհրաժեշտ գործընթացները:
- Ապահովել բոլոր աշխատակիցների համար սեռական ոտնձգության թեմայով էլեկտրոնային ուսուցման պարտադիր դասընթաց:
- Գործունեության շարունակականության ապահովման նպատակով ապահովել, որ նշանակվեն հիմնական պատասխանատուները և նրանց փոխարինողները, վերջիններս վերապատրաստված են գրասենյակի հիմնական գործունեության անխափանությունն ապահովելու թեմայով: Տնից աշխատող աշխատակիցներին պետք է ապահովել հեռահաղորդակցման սարքավորումներով, և տեղերում աշխատողներին՝ կարևոր փաստաթղթերով/ գրանցումներով: Սա կներառի ներքին վերականգնման ընթացքում տեխնոլոգիաների մասով աջակցություն ցուցաբերող Ակտիվացված հիմնական պատասխանատուների նշանակումը:
- Ապահովել, որ գրասենյակի գործառնությունների վրա ազդող ներքին ճգնաժամի դեպքում հատուկ կարիքներ, բարդություններ և հիվանդություններ ունեցող աշխատակիցներին աջակցություն տրամադրվի:

Արձագանքում

- Ազգային գրասենյակը՝ համակարգելով Տարածաշրջանային և Գլխավոր գրասենյակների հետ պետք է մոբիլիզացնի լրացուցիչ կարողություններ/մարդկային ռեսուրսներ, որի գործընթացը պետք է իրականացվի հումանիտար հայտարարագրի ներկայացմանը զուգահեռ: Սա պետք է իրականացվի ներդրված արագ արձագանքման մեխանիզմների, արտակարգ իրավիճակների արձագանքման թիմի և այլ կազմակերպության ներսում վերատեղակայված աշխատակիցների, նոր աշխատակիցների և գործընկերների միջոցով:

- Վերանշանակել կամ վերատեղակայել Ազգային և Տարածաշրջանային գրասենյակների աշխատակիցներին, որոնք կաջակցեն արտակարգ իրավիճակների արձագանքման գործողություններին, կամ վերատեղակայել տարածաշրջանի աշխատակիցներին:
- Ընտրել և աշխատանքի ընդունել նոր թեկնածուների գլոբալ էլեկտրոնային պլատֆորմի, այլ արտաքին աղբյուրների և գործընկերների միջոցով:
- Աշխատակիցների և արտակարգ իրավիճակի արձագանքման համար տեղակայված խորհրդատուների համար իրականացնել նախատեսված ՅՈՒՆԻՍԵՖ-ի տեղակայման թեմայով դասընթաց:
- Բոլոր աշխատակիցներին տրամադրել ՅՈՒՆԻՍԵՖ-ի աշխատակազմի հոգեբանական խորհրդատվության գրասենյակի կոնտակտները, ինչպես նաև որևէ տեղական խորհրդատվական ռեսուրս, ներառյալ ՄԱԿ-ի խորհրդատուներ, տեղական խորհրդատուներ և այլոք:
- Ապահովել, որ ՅՈՒՆԻՍԵՖ-ի բոլոր աշխատակիցները և գործընկերները ստորագրեն վարքի կանոնների փաստաթուղթը և տեղեկանան դրանց հիմնական վեց սկզբունքների խախտման մասին զեկուցելու մեխանիզմների մասին:
- Արտակարգ իրավիճակում տեղակայման դեպքում ապահովել, որ առաքելությամբ տեղակայվող ՅՈՒՆԻՍԵՖ-ի աշխատակիցները, արտաքին թեկնածուները (ներառյալ խորհրդականները), ինչպես նաև գործընկերները անցում են ՅՈՒՆԻՍԵՖ-ի տեղակայման վերապատրաստման դասընթացները մինչև տեղակայումը, առաքելության վայր ժամանելուց անմիջապես հետո և առաքելության ավարտից հետո:

3.4 Ռեսուրսների հավաքագրում

Հանձնառություն 1	Ժամանակին հավաքագրված են որակյալ, ճկուն ռեսուրսներ՝ մարդասիրական ճգնաժամում երեխաների և կանանց իրավունքների պաշտպանության և կարիքների բավարարման նպատակով:

Պատրաստվածություն

- Մշակել արտակարգ իրավիճակներում ռեսուրսների հավաքագրման ռազմավարություն, որը կապված կլինի հիմնական ազգային ծրագրի ռազմավարության հետ:
- Ազգային և Տարածաշրջանային գրասենյակները պետք է օգտվեն Հանրային հատվածի դաշինքների և ռեսուրսների հավաքագրման

գրասենյակի (ՀԴՌՀԳ/PARMO) էլեկտրոնային կայքից՝ գտնելու դոնորների մասին տեղեկություններ, ստանդարտ համաձայնագրեր և արտակարգ իրավիճակներում անհրաժեշտ ֆոնդերից օգտվելու և դրանք կառավարելու գործընթացների մասին ուղեցույցներ: Ազգային և Տարածաշրջանային գրասենյակները պետք է կապ հաստատեն ՀԴՌՀԳ-ի (Բրյուսել, Նյու Յորք, Տոկիո), մասնավոր ֆոնդերի հայթայթման և դոնոր գործընկերությունների ներկայացուցիչների հետ՝ քարտեզագրելու դոնորների հետաքրքրության ոլորտները և, անհրաժեշտության դեպքում, գտնելու այլ ուղեցույցներ:

- Կապ հաստատել տեղական դոնորների հետ գործնական հարաբերություններ ստեղծելու, գործողություններ նախաձեռնելու, ՅՈՒՆԻՍԵՖ-ի պատրաստակամության մասին տեղեկացնելու և թեմատիկ ֆինանսավորման, որպես ճկուն և արդյունավետ մեխանիզմի, կարևորության մասին հայտնելու նպատակով:
- Ծանոթացնել Ազգային գրասենյակի ղեկավարությանը արտակարգ իրավիճակների արձագանքման ծրագրերի և ԱԻԱԿՀ ֆինանսավորում գտնելու ընթացակարգերի, գործընթացների, ֆորմատի և այդ ծրագրերի անհապաղ մեկնարկի մասին:
- Ապահովել, որ աշխատակազմը մասնակցի կազմակերպության ներսում և այլ աղբյուրների կողմից իրականացվող վերապատրաստման (օրինակ, հանրային և մասնավոր սեկտորների գործընկերության և ԱԻԱԿՀ-ի վերաբերյալ)՝ լավագույնս հասկանալու աշխատանքի պլանավորման, ներառյալ արտակարգ իրավիճակներում ռեսուրսների հավաքագրման, գործընթացներն ու ընթացակարգերը:

Արձագանքում

- Վերածրագրավորել ազգային ծրագրի բյուջեում առկա ռեսուրսները կամ այլ ռեսուրսներ, անհրաժեշտության դեպքում 24-72 ժամվա ընթացքում կազմել արտակարգ իրավիճակի արձագանքման ծրագրի համար անհրաժեշտ գումարի վարկի հայտ՝ համագործակցելով Տարածաշրջանային գրասենյակի և Արտակարգ իրավիճակների արձագանքման ծրագրերի գրասենյակների հետ:
- Չկանխատեսված արտակարգ իրավիճակի առաջին 24-72 ժամվա ընթացքում մշակել Անհապաղ կարիքների մասին փաստաթուղթ, որը պետք է ներկայացնել կառավարությանը, դոնորներին և պետական կոմիտեներին արտակարգ իրավիճակին արձագանքելու համար անհրաժեշտ այլ ռեսուրսների հայթայթման նպատակով: Հումանիտար

կամ տեղացի համակարգողի կողմից ղեկավարվող միջգերատեսչական գործընթացների միջոցով ծրագրային առաջարկ ներկայացնել ԱԻԱԿՀ-ի ֆինանսավորման համար՝ անհրաժեշտության դեպքում արագ հայտի ներկայացման գործընթացին զուգահեռ:

- Հինգից յոթ օրվա ընթացքում կազմել արտակարգ իրավիճակի մասին հայտ՝ համագործակցելով ՄԱԿ-ի այլ գործակալությունների հետ (արագ հայտն ըստ ուղեցույցի), կամ միջգերատեսչական հայտ ներկայացնելու գործընթացի բացակայության դեպքում, կազմել և ներկայացնել ՅՈՒՆԻՍԵՖ-ի առանձին հայտ (ճգնաժամի հայտ):
- Ապահովել, որ կանանց և երեխաների շարունակական կարիքները պատշաճ կերպով արտացոլված լինեն միջգերատեսչական Դիմումների կենտրոնացված գործընթացում (ԴԿԳ/CAP) և ՅՈՒՆԻՍԵՖ-ի Մարդասիրական գործողության զեկույցում (ՄԳՁ/HAR):
- Թողարկել մարդասիրական գործողության մասին պարբերական տեղեկատվություն, որը Ազգային և Տարածաշրջանային գրասենյակներին հնարավորություն կընձեռի զեկուցել արդյունքների և ֆինանսավորման բացերի ու կարիքների մասին:
- Կապ հաստատել դոնորների հետ տեղական և գլխավոր գրասենյակի մակարդակներում, նրանց տրամադրելով իրավիճակի զարգացման մասին պարբերական տեղեկատվություն, կառավարել առկա ֆոնդերը և կազմել որակյալ հաշվետվություններ՝ ըստ յուրաքանչյուր դոնորի կողմից պահանջվող պայմանների և ժամանակացույցի:

Արագ վերականգնում

- Ապահովել, որ արագ վերականգնման մոտեցումները հաշվի առնվեն պլանավորման գործընթացներում և պատշաճ կերպով արտացոլվեն արձագանքման մասին հայտերում (ԴԿԳ, ՄԳՁ, արագ հայտեր, արագ վերականգնման հայտեր):
- Մասնակցել արագ վերականգնման կարիքների, ներառյալ հետկոնֆ-լիկտային և հետաղետային կարիքների գնահատմանը, ապահովելու, որ երեխաների և կանանց իրավունքներին տրվի առաջնահերթություն և, որ դոնորների մոբիլիզացման ընթացքում երեխաների և կանանց կարիքներին արձագանքելու համար անհրաժեշտ գումարները ներառվեն համապատասխան ֆոնդերի համար հայտարարագրերում:
- Հնարավորության դեպքում առաջին իսկ փուլերից մասնակցել համատեղ ֆինանսավորման, ներառյալ ընդհանուր հումանիտար ֆոնդերի, արտակարգ իրավիճակներում աջակցության ֆոնդերի և դոնորների համատեղ տրաստային ֆոնդերի, մեխանիզմի մշակմանը, ապահովելու

դրա արդյունավետ իրականացումը և խթանելու երեխաներին ու կանանց ուղղված ծրագրերի ընդգրկումը:

3.5 Ֆինանսներ և ադմինիստրացիա

Հանձնառություն 1	Տարածաշրջանային գրասենյակի և ՅՈՒՆԻՍԵՖ-ի գլխավոր գրասենյակի աջակցությամբ հիմնված են արդյունավետ և թափանցիկ կառավարման կառույցներ՝ ծրագրի և գործառնական ԵԱՀ-ի արդյունավետ իրականացման նպատակով: Սա իրականացվում է անխափան ֆինանսական հաշվետվականության և համապատասխան հսկողության պայմաններում:

Պատրաստվածություն

- Արտակարգ իրավիճակների պատրաստվածության և արձագանքման պլանի հիման վրա գնահատել տվյալ երկրում ՅՈՒՆԻՍԵՖ-ի ֆինանսական և վարչարարական կարողությունները, ներառյալ.
  - Ներքին հսկողության համակարգը. պարտականությունների բաժանում և ձեռքով վարվող հաշվապահության պատրաստվածություն
  - Ֆիզիկական ապահովություն. գրասենյակի և բնակելի տարածքների, գույքի և այլ պարագաների:
- Ապահովել ցանկացած պահի իրացվելիությունը և, որ ձեռնարկված են լրացուցիչ գործողություններ և հայտնաբերված են լրացուցիչ աղբյուրներ, որոնք կապահովեն գործունեության շարունակականությունը:
- Գործունեության շարունակականության ապահովման համար գրասենյակի տեղակայման այլ տարածքի ընտրության դեպքում.
  - Ապահովել, որ նոր տարածքը պատրաստ է ընդունելու հիմնական աշխատակիցներին և տրամադրել համապատասխան վարչական, տեղեկատվական տեխնոլոգիաների և հեռահաղորդակցման մասով ապահովում, ինչը հնարավոր կդարձնի գործառնությունների շարունակականությունը:
  - Ապահովել, որ առկա են բավարար պարագաներ և նյութեր, հաշվի առնելով գենդերային և հաշմանդամության կարիքները:

Արձագանքում

- Վերանայել, գործնականում կիրառել (անհրաժեշտության դեպքում) և մոնիտորինգի ենթարկել հետևյալը.
  - Պատվիրակված իրավասությունների տեղինություն (ներառյալ հսկող հանձնաժողովների). հաշվի առնելով աշխատակազմի, աշխարհագրական

տեղակայման և ծրագրային գործողությունների փոփոխությունները:

- ՅՈՒՆԻՍԵՖ-ի կորպորատիվ ֆինանսական համակարգերի, և անհրաժեշտության դեպքում դրանց փոխարինողների հասանելիությունը:
- Լրացուցիչ գրասենյակային և բնակելի տարածքների կարիքները, գույքի և այլ պարագաների անվտանգությունը:
- Իրացման և վճարումներ կատարելու մեթոդները:

- Անմիջապես պատասխանել Տարածաշրջանային և Ազգային գրասենյակների (Ֆինանսական և վարչական բաժնի) ֆինանսների և վարչարարության վերաբերյալ հարցումներին:
- Ֆինանսական և ադմինիստրացիայի կառավարման բաժինը պետք է խորհրդակցի Տարածաշրջանային և Ազգային գրասենյակների և Մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի հետ՝ անհրաժեշտության դեպքում ֆինանսների և ադմինիստրացիայի բաժնի աշխատակիցների արտակարգ իրավիճակի վայր տեղակայման հարցերով:

Արագ վերականգնում

- Վերանայել արտակարգ իրավիճակի ընթացքում ներդրված փոփոխությունները՝ հսկողությունը, ընթացակարգերը և համակարգերը կարգավորելու և ադմինիստրատիվ ու հաշվապահական պահանջների իրականացումը ապահովելու նպատակով:

3.6 Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ

Հանձնառություն 1	Ժամանակին, արդյունավետ և կանխատեսելիորեն իրականացվող հեռահաղորդակցության ծառայություններ, որոնք ապահովում են ծրագրերի արդյունավետ և անվտանգ իրականացում, աշխատակազմի անվտանգություն և համապատասխանություն միջգերատեսչական հանձնառություններին:

Պատրաստվածություն

- Ապահովել արտակարգ իրավիճակներում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ/ICT) և հեռահաղորդակցության հիմնական սարքավորումների և ծառայությունների անհապաղ հասանելիություն՝ արտակարգ իրավիճակներում ծառայության մատուցման դրույթ (Գլխավոր և Տարածաշրջանային գրասենյակներ) ներառող մատակարարման պայմանագրերի առկայության միջոցով:
- Բարձր ռիսկայնության գոտում գտնվող գրասենյակներում նախատեսել արտակարգ իրավիճակներում արագ տեղակայման հիմնական ՏՀՏ

լուծումներ (Տարածաշրջանային և Ազգային գրասենյակներ), ապահովել լիցենզավորում և տվյալ երկրի կառավարության հետ համաձայնագրեր հեռահաղորդակցման հիմնական սարքավորումների և ծառայությունների (Ազգային գրասենյակ/միջգերատեսչական) ներկրման և լիցենզավորման վերաբերյալ:

- Ապահովել վերապատրաստված և արտակարգ իրավիճակներում փորձառու ՏՀՏ մասնագետների ժամանակին առկայությունը՝ ներքին և արտաքին թեկնածուների ցուցակներ պահելու միջոցով (Գլխավոր և Տարածաշրջանային գրասենյակներ):
- Ապահովել, որ ՅՈՒՆԻՍԵՖ-ի բոլոր ազգային գրասենյակներում լինի առնվազն մեկ ՏՀՏ մասնագետ՝ վերապատրաստված արտակարգ իրավիճակներում արձագանքման թեմայով (Ազգային և Տարածաշրջանային գրասենյակ):
- Ապահովել, որ ՅՈՒՆԻՍԵՖ-ի ազգային և տարածաշրջանային մակարդակներում կազմակերպվող բոլոր արտակարգ իրավիճակների արձագանքման թեմայով դասընթացներում ներառվի ՏՀՏ ոլորտը, և կազմակերպել արտակարգ իրավիճակներում ՏՀՏ տարեկան դասընթացներ (Գլխավոր/Տարածաշրջանային/Ազգային գրասենյակներ):
- Ապահովել, որ Ազգային գրասենյակների ՏՀՏ մասնագետները վերապատրաստվեն ԱՆԿՍ/անվտանգ հեռահաղորդակցման պահանջների թեմայով (Գլխավոր/Տարածաշրջանային/Ազգային գրասենյակներ), և որ ԱՆԿՍ հեռահաղորդակցման համապատասխանությունը գնահատվի և զեկուցվի՝ որպես գրասենյակի ՏՀՏ ընթացիկ գործունեության մաս (Տարածաշրջանային/ Ազգային գրասենյակներ):
- Աջակցել միջգերատեսչական և ոչ-պետական կազմակերպությունների արտակարգ իրավիճակներում ՏՀՏ աշխատանքային խմբերին տեղական գրասենյակի մակարդակում (Գլխավոր/Տարածաշրջանային/ Ազգային գրասենյակներ):
- Աջակցել և ապահովել արտակարգ իրավիճակներում ՏՀՏ/ հեռահա-ղորդակցման սարքավորումների, ծառայությունների և ընթացակարգերի միջգերատեսչական ստանդարտացումը (Գլխավոր գրասենյակ):
- Գործունեության շարունակականության ապահովման նպատակով ապահովել, որ կարևոր աշխատակիցներն ունենան հեռահաղորդակցման կապի և ՅՈՒՆԻՍԵՖ-ի հիմնական համակարգերին միանալու հնարավորություն (Տարածաշրջանային/Ազգային գրասենյակներ), առկա լինեն յուրաքանչյուր գրասենյակին հատուկ պահանջներ և ՏՀՏ

լուծումների և ծառայությունների բաժնի կողմից մշակված գործունեության շարունակականությունն ապահովող պլաններ (Գլխավոր գրասենյակ):

- Յուրաքանչյուր գրասենյակին հատուկ պահանջներից ելնելով և համաձայն ՏՀՏ լուծումների և ծառայությունների բաժնի կողմից սահմանված ընթացակարգերի և ուղեցույցների, ու գործունեության շարունակականությունն ապահովող պլանների, իրականացնել հեռահաղորդակցման կապի ստուգումներ: Ապահովել գրասենյակի համար անհրաժեշտության դեպքում հույժ կարևոր գործընթացների հեռակառավարում (Տարածաշրջանային/ Ազգային գրասենյակներ):
- Ապահովել, անհրաժեշտության դեպքում և յուրաքանչյուր գրասենյակին հատուկ պահանջների համաձայն, հիմնական փաստաթղթերի հասանելիությունը հեռահաղորդակցման կապի միջոցով՝ տեղակայված աշխատակազմի և տնից աշխատող աշխատակիցների համար հույժ կարևոր գործընթացների իրականացման հնարավորություն ստեղծելու նպատակով (Տարածաշրջանային/Ազգային գրասենյակներ):

Արձագանքում

- Իրականացնել արտակարգ իրավիճակներում ՏՀՏ և հեռահաղորդակցման բացերի անհապաղ գնահատում՝ որոշելու ԱՆԿՍ/անվտանգ հեռահաղորդակցման համապատասխանության և տվյալների փոխանցման (ինտերնետ, էլեկտրոնային փոստ և այլն) ծառայությունների մատչելիության լուրջ թերությունները, որոշել անհրաժեշտ ռեսուրսների և արտաքին օժանդակության կարիքները (Տարածաշրջանային/Ազգային գրասենյակներ):
- Համագործակցել կլաստերային գործընկերների հետ որոշելու հեռահաղորդակցման և տվյալների փոխանցման ծառայությունների համատեղ օգտագործման հնարավորությունները, և ստանձնել տեղական մակարդակում կլաստերի ղեկավարի պարտականությունները՝ ըստ կարիքի և համաձայն միջգերատեսչական պայմանավորվածության (Տարածաշրջանային/Ազգային գրասենյակներ):
- Անհրաժեշտության դեպքում հայցել արտակարգ իրավիճակներում վերապատրաստված ՏՀՏ և հեռահաղորդակցման մասնագետների և արտակարգ իրավիճակներում հեռահաղորդակցման ծրագրերի համակարգողների տեղակայում (Տարածաշրջանային/Ազգային գրասենյակներ):
- Կազմել մատակարարման կոնսոլիդացված պլան, որը կներառի սահմանված ՏՀՏ և հեռահաղորդակցման սարքավորումները և ծառայությունները (Ազգային գրասենյակ):

- ՅՈՒՆԻՍԵՖ-ի հիմնական աշխատակիցներին տրամադրել կորպորատիվ ծրագրերին հեռահաղորդակցման կապի հնարավորություն՝ կիրառելով անվտանգ կապի լուծումներ (օրինակ, վիրտուալ մասնավոր ցանցեր) (Ազգային գրասենյակ):

Արագ վերականգնում

- Ապահովել կորպորատիվ տվյալների փոխանցման անվտանգ կապ. օրինակ՝ VSAT[8], և ներդնել ՅՈՒՆԻՍԵՖ-ի հիմնական տեղեկատվական համակարգերը և դրանց կից ենթակառուցվածքները՝ արտակարգ իրավիճակի արձագանքման երկարաժամկետ գործողությունների համար (Ազգային գրասենյակ):
- Իրականացնել ՏՀՏ և հեռահաղորդակցման միջոցների ընթացիկ և խորը գնահատում՝ որոշելու արագ գնահատման և երկարաժամկետ գործառնությունների իրականացման կարիքները, աջակցել արտակարգ իրավիճակներում միջգերատեսչական համատեղ ՏՀՏ ծրագրերի պլանավորմանը, իրականացմանը և փոխանցմանը համապատասխան կարողություններ ունեցող գործընկերներին (Տարածաշրջանային/ Ազգային գրասենյակներ):

[8] Very .Small .Apeture Terminal

Նշումներ

© Միավորված ազգերի կազմակերպության
Մանկական հիմնադրամ (ՅՈՒՆԻՍԵՖ)
Մայիս, 2010 թվական
United Nations Children's Fund
Միավորված ազգերի կազմակերպության հրապարակ,
3 [United Nations Plaza]
Նյու Յորք, NY 10017, ԱՄՆ
Վեբկայք՝ www.unicef.org

ISBN 978-92-806-4512-5
9 789280 645125